

Ա. Արշակունյաց

ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ
ՀԱՅՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

ԿՈՒՍԴՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ
1935

338.4
ՕՐ-955

17 FEB 2010

338.4

0-693

Դրակեանի բոլոր յերկիրների, միացե՛ք

40

Ա. ՈՐՁՈՆԵԿԵԶԵՑ

ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԺՈՂՈՎՐԴՅԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ
ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VII ՀԱՍԳՈՒՄԱՐԻՆ

20
21
22

02
03

1008
35771

1935 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 31-ԻՆ.



4 SEP 2013

31332

Թարգմ. Հ. Թուրեյան
Խմբ. Պ. Արելյան
Մրագրիչ. Գ. Վոսկանյան



Գլավլիսի լիազոր C—28
Հրատ. № 270, պատ. № 134
Տիրած 5000, ինդիքս ՊС—17



Կումբաշի տպարան, Ալանվերդյան և 27

С. ОРДЖОНИКИДЗЕ
Отчетный доклад
Народного комиссариата
тяжелой промышленности
VII съезду советов
Партизадат, 1935, Эривань

Ընկերներ, նախքան ծանր արդյունաբ-
ռերության այսօրվա վիճակի ու աշխա-
տանքի բնութագրմանն անցնելը, թույլ
տվեք մի քանի խոսքով կանգ առնել այն
հարցի վրա, թե ինչպիսի նշանակություն
եր տալիս ծանր արդյունաբերությանը Վլա-
դիմիր Իլյիչ Լենինը, ինչպիսի նշանակու-
թյուն եր տալիս ու տալիս են նրան ընկ.
Ստալինը: Առանց ծանր արդյունաբերու-
թյուն ստեղծելու, առանց ժամանակակից
մեքենայական արտադրություն ստեղծե-
լու՝ մեր Խորհրդային Միությունը չեր կա-
րողանա տոնել իր հաղթանակները: Ընդ-
հակառակը, յեթե մենք չկարողանայինք
ստեղծել ծանր արդյունաբերություն, մենք
դադութի կվերածվեյինք, ինչպես Զինաս-
տանը, իսկ պրոլետարական պետությունը
կճգմվեր:

Դեռ 1921 թվականին, մեր մեծ առաջնորդ
և մեր կուսակցության կազմակերպիչ, Հոկ-

տեմբերյան հեղափախության կազմակերպիչ
ու առաջնորդ Վ. Ի. Լենինը գրում եր.

«Մեքենայական խոշոր արդյունաբերությունը և նրա փոխադրումը հողագործության բնագավավում սոցիալիզմի միակ տնտեսական բաղան ե, կապիտալիզմի ճիրաններից մարդկությունն աղաւելու համար մզկող հաջող պայքարի միակ բաղան»:

Յել այսուհետեւ, 1922 թվականին, Կոմունիստական խնտելնացիոնալի չորրորդ կոնգրեսում տված իր զեկուցման մեջ լենինն ասում էր.

«Մենք տնտեսում ենք ամեն բանում, նույնիսկ դպրոցներում: Այդ պետք ե լինի, զորովհետև մենք զիտենք, վոր առանց ծանր արդյունաբերությունը փրկելու, առանց այն վերականգնելու, մենք չենք կարողանա կառուցել վոչ մի տեսակի արդյունաբերություն, իսկ առանց դրան մենք առհասարակ կկործանվենք վորպես ինքնուրույն յերկիր: Այս բանը մենք լավ գիտենք...»:

«...Ծանր խողուստրիան կարու և պետական նյութական ոժանդակության: Յեթե մենք այդ չգտնենք, ապա մենք վորպես քաղաքակերթ պետություն

յես ել չեմ ասում վորպես սոցիալիստական — կործանված ենք»:

1925 թվականին, Մոսկվայի ակտիվի նիստում 14-րդ կուսակցական կոնֆերանսի մասին զեկուցելով՝ լենինիզմի հավատարկման մեր կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինը խոսում էր ծանր արդյունաբերության զարգացման միջազգային նշանակության մասին: Նա ասում էր.

«Ինչ վերաբերում ե մեր մետաղարդյունաբերության գարգացման միջազգային նշանակությանը, ապա այն, կարելի յե ասել, անչափելի յե: Քանի վոր ի՞նչ ե նշանակում մետաղարդյունաբերության բռուն աճումը պրոլետարիատի դիկտատորայի ժամանակ, յեթե վոչ ուղղակի ապացուցյաց այն բանի, վոր պրոլետարիատն ընդունակ ե վոչ միայն իսրաւելու հինը, այլև կառուցելու նորը, վոր նա ընդունակ ե իր սեփական ուժերով կառուցելու նոր արդյունաբերություն և նոր հասարակություն, վորն ազատե մարդուն մարդու կողմից շահագործելուց: Իսկ ապացուցել այս գործականում ե վոչ թե զբքով, այդ նըշանակում ե հաստատապես ու վերջնակա-

նապես առաջ մղել միջազգային հեղափոխության գործը»:

Այստեղից ել, ընկերնե՛ր, այն հակառական ուշադրությունը, վոր մեր կուսակցությունը նվիրել է ծանր արդյունաբերության զարգացմանը, այստեղից ել այն ամենակատարի պայքարը, վոր կուսակցությունը մղել է աջ ոպորտունիտների և այն ժամանակ այսպես կոչված «ձախերի», իսկ ներկայում Զինովյեվի, Կամենեվի ու Տրոցկու սպիտակգվարդիական բանդայի դեմ:

Կուսակցությունն ընկ. Ստալինի ղեկավարությամբ ջախճախեց այդ պարոններին և ծավալուն Փրոնտով մկնեց ծանր արդյունաբերություն կառուցել լենինյան ուղիով: Հենց այն բանին, թե ինչու ե ընթացել այդ շինարարությունը Խորհուրդների Երդ համագումարը 7-րդից բաժանող չորս տարիների ընթացքում — նվիրված կլինի իմ հաշվետու ղեկուցումը:

Առ 1-ն Հունվարի 1931 թվականի, ծանրը արդյունաբերության բոլոր հիմնական Փոնդերը կազմում ելին 9.434 միլիոն ոսւրդի: Այդ չորս տարի առաջ եր: Խորհուրդների 7-րդ համագումարին, ծանր արդյունաբերության հիմնական Փոնդերը կազմում

էն 28.903 միլիոն ոսւրդի: (Ծափեր):

Ածում՝ չորս տարվա ընթացքում՝ ալելլ քանի յերեք անդամ:

Վորապեսի ծանր արդյունաբերության հիմնական ֆոնդերը 9.434 միլիոն ոսւրդուց մինչև 28.903 միլիոն ոսւրդու հասցնել, այսինքն՝ ամեցնել ավելի քան յերեք անդամ, հարկավոր եր հսկայական միջոցներ ներդնել ծանր արդյունաբերության մեջ, հարկավոր եր կազմակերպել մարդկային հսկայական մասսաներ, կառուցել և յուրացնել կառուցված ու վերակառուցված ձեռնարկությունները: Հարկավոր եր բուն իսկ շինարարության ու շահագործման ընթացքում ղեկավարների կազմեր, բանվորների կազմեր դաստիարակել, — իսկ այդ բանն առավել ևս գժվարին եր: Աժրողջ ժողովրդական տնտեսության մեջ, մեր վողջ շինարարության մեջ, ամբողջ աշխատանքի մեջ ամենավճռականը հանշնաշել են ու հանդիսանում են կարերը:

Լենինի կուսակցությունը միջոցներ չըխնայեց ծանր արդյունաբերությունը զարգացնելու համար: Բոլենիկյան կուսակցությունը լենինի աշակերտ ընկ: Ստալինի ղեկավարությամբ դատավայր այն արեւական միջոցները, վորոնց մասին խոսում եր վլա-

դիմիր Իլյիչը : Բոլշևիկների կուսակցությունը ու մեր կառավարությունն այս չորս տարվա ընթացքում ծանր արդյունաբերության մեջ ներդրել են 30.306 միլիոն ռուբլի, շահագործման են հանձնել 22.549 միլիոն ռուբլու արժողությամբ կառուցված և վերակառուցված ձեռնարկություններ, մեր արդյունաբերության համար կատարվող ներմուծման մեջ ներդրել են մոտ մեկ միլիարդ ռուբլի՝ վոսկով :

Մանր արդյունաբերության աշխատողները՝ Լենինի-Ստալինի իրենց կուսակցության զեկավարությամբ, հսկայական խընդիմություն ատեղծելու ուղղությամբ, կառուցել են գործարաններ, Փարրիկներ, հանքահորեր, յերկաթահանքեր, ելեկտրոկայաններ, նայթահանքեր, կալիումի ու ապատիտների հանքատեղեր և այլն, և այլն : Կառուցել ու յուրացրել են տրակտորային ու ալյումորիլային գործարաններ, կառուցել և յուրացրել են թերեզնյակին, Ստալինոգորսկը, Մագնիսկան, Կուզնեցկը, Կրիվոյ Ռոգը, Զավորոժստալլը, կառուցել ու յուրացրել են Սլիբորեսը, Ռիփոնգեսը, Զորագորսկը, Շատուրկան, Զույեվկան, Հարյուրագոր ու հաղարամոր նոր կայաններ ու

գործարաններ, կառուցել ու յուրացրել են ածխային Դոնբասը, Կուզբասը, Կարագանդան :

Մեր գործարանների շինարարության վրա կոփիվել են կառուցողների նոր կաղըրեր, իհարկե, վոչ առանց սխալների և յերբեմն վոչ առանց տհաճ սխալների, սառկայն այլ ուղի մենք չունեյինք :

Ընկ . Ստալինն անցյալ տարվա դեկտեմբերի 26-ին մետաղուրդների հետ ունեցած գրուցի մեջ ասում եր .

«Մենք աելինիկապես գրագետ մարդիկ չափազանց քիչ ունեյինք : Մեր առջև դիմմայ յեր կանգնած՝ կամ սկսել տեխնիկական գրադիտության դպրոցներում մարդկանց սովորեցնելուց և տասը տարով հետաձգել մեքենաների արտադրությունն ու մասսայական շահագործումը, մինչև վար գրոցներում պատրաստվելին տեխնիկապես գրագետ կաղըրեր, կամ թե անհապաղ ձեռնամուխ լինել մեքենաների ստեղծելուն և զարգացնել նրանց մասսայական շահագործումը ժողովրդական տնտեսության մեջ, վորապեսզի մեքենաների արտադրության ու շահագործման բուն իսկ պրոցեսում մարդկանց տեխնիկա սովորեցնել, կաղըրեր պատրաստել : Մենք

ընտրեցինք յերկրութ ուղին։ Մենք բացահայտորեն ու գիտակցաբար հանդուրժեցինք ալդ դեպքում անխուսափելի մեքենաների հետ վարվել կարողացող տեխնիկակես պատրաստված մարդկանց պակասության հետ կապված ծախսերն ու գերածախսերը։ Ճիշտ է, այդ ժամանակվա ընթացքում մեզանում քիչ մեքենաներ չկոտրեցին։ Սակայն դրա փոխարեն մենք շահեցինք ամենաթանգարժեքը՝ ժամանակը և ստեղծեցինք ամենաարժեքավլորը տնտեսության մեջ՝ կաղըրերը։ 3—4 տարիների ընթացքում մենք տեխնիկակես դրավետ մարդկանց կաղըրեր ստեղծեցինք, ինչպես ամեն տեսակի մեքենաների (տրակտորներ, ավտոմոբիլներ, տանկեր, ինքնաթիւներ և այլն) արտադրության բնագավառում, այնպես ել նրանց մասսայական շահագործման ընագավառում։ Այն, ինչ Յեվրոպայում կատարվել է տասնյակ տարիների ընթացքում, մենք սեադիր կերպով ու հիմնականում կարողացանք կատարել յերեք-չորս տարվա ընթացքում։ Մախսերն ու գերածախսերը, մեքենաների կոտրատուումը և մյուս վընասները հատուցվեցին հավելուրդով։ Դրանումն ե մեր յերկրի արագ ինդուս-

տրացան հիմքը»։

Յեվ այս, իհարկե, բացարձակապես ճիշտ է։ Այլ ուղի չկար և չեր կարող լինել։ Յեթե վորևէ մեկը մտածեր գնալ այլ ուղիով, ապա այսոր մենք ձեզ հետ միասին այստեղ նիստի հավաքված չեյինք լինի և չեյինք տոնի մեր հաղթանակները։

Միակ ուղին — կաղըրերի գանակարակման և մեր արդյունաբերության զարգացման ուղին եր, վորը մատնանշվել է լենինի ու Ստալինի կողմից։ (Ծափեր)։ Դրա չնորհիլ մենք այսոր հաղթողներ ենք։ Ներկայումս մեր արդյունաբերությունն ունի կաղըրեր։ Դրանք ստեղծված են — հազարավոր ու տասնյակ հազարավոր հրամանատարներ, վորոնք վատ չեն աշխատում այսոր և վորոնք շատ ալելի լավ կաշխատեն վաղը։ Դրանում վոչ մի տարակույս չկա։ Մեր արդյունաբերական ԲՈՒՀ-երը, տեխնիկումները, բանֆակները, Փարզութունները, վորոնք կազմակերպված են ընկ։ Ստալինի ցուցումով, սկսել են տասնյակ ու հարյուր հազարավոր ինժեներներ, տեխնիկներ, հմուտ բանվորներ բաց թողնել, իսկ գրանից ել ալելի մեծ քանակություն առլորել և կառուցումների վրա և դադոյահների մոտ՝ գործարաններում։

Ի՞նչ ենք կառուցել մենք այս չորս տարի-
վա ընթացքում: Կառուցել ենք ծանր ար-
դյունաբերություն, կառուցել ենք արտադ-
րության միջոցներ արտադրող արդյունա-
բերություն:

Կոնկրետ կերպով ասած ի՞նչ բան է
այդ: Այդ վողջ մեքենաշինությունն է, բո-
լոր մեքենաները, բոլոր սարքերը, վողջ
ճիշտ ապարատուրան, վողջ ոպտիկան,
պաշտպանության բոլոր գենքերը, այդ թւ-
վում բոլոր թնդանոթները, բոլոր ինքնա-
թիւնները, բոլոր գնդացիքները, բոլոր տաճ-
կերը, բոլոր մոտոռները: Այդ—վողջ ու-
ու գունավոր մետալուրգիան է. այդ —
վողջ վառելիքի արդյունաբերությունն է,
քարածուկը, տորֆը, նավթը, թերթաքա-
րերը. այդ — բոլոր հիմնական ելեկտրո-
կայաններն են. այդ — վողջ քիմիական
արդյունաբերությունն է. այդ — շինա-
նյութերի ամենազլիսավոր տեսակներն են.
այդ — վողջ ոեղինի արդյունաբերու-
թյունն է. այդ—բոլոր մետաղներն են,
տեխնիկական հյուսվածքները, այդ — մեր
յերկրում արդյունահանվող ամբողջ վոս-
կին է, այդ — հաղթագյուտ տարրերն են.

այդ — վոչ մետաղային հանածոներն են:
Թույլ տվյալ համառոտակի կանգ առնել
յուրաքանչյուր ձյուղի վրա առանձին:

ԽՍՀՄ-ի ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱՆ

Ակսենք ԽՍՀՄ-ի ելեկտրիֆիկացիայից:
Դուք բոլորդ ել լարվ գիտեք, թե ինչպիսի
խոչը նշանակություն եր տալիս Վլադիմիր
Բլյահ Լենինը մեր Միության ելեկտրիֆի-
կացիայի զարգացմանը: Դեռ 1920 թվակա-
նին Լենինն ասում եր.

«Եկթե Ռուսաստանը ծածկվի ելեկ-
տրական կայսմաների և հզոր տեխնիկական
սարքավորումների խիստ ցանցով, ապա
մեր կոմունիստական տնտեսական շինա-
րարությունն որինակ կզանա զալիք սո-
ցիալիստական Յելլոպայի ու Ասիայի
Համար»:

Յեկայնուհետև.

«Մենք գիտենք, վոր կոմունիստական
հասարակություն չի կարելի կառուցել,
յեթե չվերածնեցնենք արդյունաբերու-
թյունն ու հողագործությունը. ըստ վո-
րում զբանք պետք է վերածնել վոչ հին
ձևով: Դրանք պետք ե վերածնել ժամա-
նակակից գիտության վերջին խորքով կտ-

ոռոցված հեմքի վրա : Դուք դիտեք, վո՞
այդ հիմքն ելեկտրականությունն է» :
Ի՞նչ ենք արել մենք այս բնագավառում
խորհուրդների վեցերորդ համագումարից
հետո ընկած չորս տարիների ընթացքում :
Ելեկտրոկայանների սահմանված կարողու-
թյունը 1930 թվականի վերջերին կազմում
եր 2876 հազար կիլովատ, իսկ առ մեկն
հունվարի 1935 թվականի կազմում ե
6.212 հազար կիլովատ : 1930 թվականի
Համեմատությամբ — 216 տոկոս : (Մա-
փեր) :

Միության բոլոր ելեկտրոկայանները
1930 թվականին մշակել ենին 8.368 միլիոն
կիլովատ-ժամ ելեկտրունիքիա . իսկ 1934
թվականին մեր բոլոր կայանները մշակել
են 20,5 միլիարդ կիլովատ-ժամ ելեկտրո-
նիքիա : 1930 թվականի համեմատու-
թյամբ — 245 տոկոս :

1930 թվականին մենք ունեինք 6.154
կիլոմետր ելեկտրոհաղորդման դիմ, առ
մեկն հունվարի 1935 թվականի մենք ունենք
12,207 կիլոմետր . աճում՝ խորհուրդների
6-րդ համագումարից մինչև 7-րդ համա-
գումարը՝ յերկու անգամ : Յանցային առա-
վել զարգացած տնտեսությունն ստեղծված
ե Մոսկայի մարզում, վորտեղ մենք ու-

նենք 3.352 կիլոմետր, Դոնբասում՝ 1.827
կիլոմետր, Ուրալում՝ 1.724 կիլոմետր,
Լենինգրադի մարզում՝ 994 կիլոմետր :
Մանր Արդյունաբերության ժողկոմատի
շրջանային կայանների ու շրջանային ցան-
ցում աշխատող արդյունաբերական խոշոր
կայանների կարողության աճումն ըստ հան-
րապետությունների ու յերկիրների հետե-
վյալ պատկերն ե ներկայացնում :

Առ. 1-ն	Առ. 1-ն
հունվարի 1931 թ.	հունվարի 1935 թ.
(հազար կիլովատներով)	
Մոսկայի մարզ	381, 5
Լենինգրադի մարզ	272, 1
Գորկու յերկիր	64, 0
Չելյաբինսկի մարզ	27, 0
Սվերդլովսկի մարզ	32, 1
Իվանովյան մարզ	33, 8
Արևմտյան Սիբիր	5, 5
Ազով-Սևվետլյան յերկ.	89, 2
Ստալինգրադի յերկիր	27, 0
Վարչովսկի մարզ	—
Հյուսիսյան Կովկասի յեր.	17, 4
Սարատովի յերկիր	10, 5
Թաթարստանի ինչնչ	6, 5
	24, 0


Արեմայան մարդ	—	22, 0
Կարելիայի ԽՍՀ	4, 5	19, 5
Կուբքշիկի յերկիր	5, 8	15, 2
Ղըկափ ԽՍՀ	7, 5	11, 1
Ղաղախստանի ԽՍՀ	—	3, 0
Հնդամ. ՌՍՖՀՀ-ում	984, 4	2.653, 7
Ուկրաինայի ԽՍՀ-ում	392, 8	1.297, 8
ՌՍՖՀՀ-ում	120, 6	274, 4
Ռւզբեկստանի ԽՍՀ-ում	6, 5	27, 8
Բելոռուսիայի ԽՍՀ-ում	10, 0	26, 4
ԽՍՀՄ-ում	1.514, 3	4280, 1
Այդ թվում		
Ռէպար-Կուղբասում	64, 6	594, 1

Ելեկտրոկայանների շահագործման տեսակետից կարողության սահմանված կիլովատի ոգտագործումը մեզ մոտ շատ ավելի բարձր է, քան Արևելյան Յելլրուսայի կապիտալիստական յերկիրներում և Ամերիկայում:

Այնտեղ կարողության սահմանված կիլովատը տարվա ընթացքում աշխատում է 1500-ից 2500 ժամ, իսկ մեր Գլավեներգոյի կայաններում՝ 4000 ժամ: Մեր կարանների տեխնիկական վերազինման չնորհիվ մենք նվաճումներ ունենք վառելիքի ծախսումն իջեցնելու ասպարիզում: Պայմանական վա-

ռելիքի ծախսումը յուրաքանչյուր կիլովատժամ եներգիայ ստանալու համար, Գլավեներգոյի բոլոր կայաններում 1930 թվականին յեղել է — 0,859 կիլոտրամ, 1931 թվականին — 0,807, 1932 թվականին — 0,773, 1933 թվականին — 0,728, 1934 թվականին — 0,684 կիլոդրամ:

Գլավեներգոյի լավագույն կայանները 1934 թվականին տվել են վառելիքի կրծատման ել ամելի լավ ցուցանիշներ, որինակ՝ կաշիրի հիմքուելեկարոկայանը (դիբեկտորը ընկ). Վախրուչյով, գլխավոր ինժեները (Մուխին) — վառելիքի ծախսումը յուրաքանչյուր կիլովատժամ եներգիայի համար՝ 0,595 կիլոդրամ. Զույելի կայանը (դիբեկտորը ընկ). Յարիշկին, նրանից առաջ ընկ. Լոշակ, գլխավոր ինժեները ընկ. Ողբութիւնը — վառելիքի ծախսումը յուրաքանչյուր կիլովատժամ եներգիայի համար՝ 0,596 կիլոդրամ. Զելյաբինսկի կայանը (դիբեկտորը ընկ. Բերեղին, գլխավոր ինժեները ընկ. Գոլուբցով) — 0,600 կիլոդրամ, իվանովյան հիմքուելեկտրոկայանը (դիբեկտորը ընկ. Բելով, գլխավոր ինժեները ընկ. Պրոտասով) վառելիքի ծախսումը — 0,581 կիլոդրամ. Գորկու կայանը (դիբեկ-



տոր ընկ. Զվլիբուլ, գլխավոր ինժեներ ընկ. Բալաբայելվ)՝ վառելիքի ծախսումը՝ 0,621 կիլոգրամ։ Բազվի՝ կրասինի անվան ելեկտրոկայանը ևս նույնպիսի հաջողություններ ունի — վառելիքի ծախսումը՝ 0,625 կիլոգրամ (դիրեկտոր ընկ. Մանդելբում, գլխավոր ինժեներ ընկ. Ֆոդել)։

1931 թվականին ընդունվեց Կուսակցության կենտրոնական Կոմիտեի հայտնի վորոշումը չերմաֆիկացիայի զարգացման մասին։ Ի՞նչ ե արված այս չորս տարվա ընթացքում։

Այս չորս տարվա ընթացքում կառուցված և շահագործման են հանձնված հետեւյալ կենտրոնական ջերմելեկտրոկենտրոնները՝ Կուտնեցիի կայանը՝ 84.000 կիլովտաս, Բերեզնյակիի կայանը՝ 93.000 կիլովտաս, Յարումալիի Կոմբինատի ջերմելեկտրոկենտրոնը՝ 25.000 կիլովտաս, Կրիվոյ Ռոգինը՝ 25.000 կիլովտաս, Լիպեցիկի կայանը՝ 24.000, Գորկու ավտոգործարանի ջերմելեկտրոկենտրոնը՝ 24.000 կիլովտաս, Խարկովի տրակտորի գործարանի կայանը՝ 15 հազար կիլովտաս, Լուգանսկի կայանը՝ 16 հազար կիլովտաս, Ռուբալմաշի կայանը՝ 10 հազար կիլովտաս, Գրոդնու կայանը՝ 25 հազար կիլովտաս, Մոսկվայի ջերմատեխնի-

կական ինստիտուտի կենտրոնական ջերմակայանը՝ 36.000 կիլովտաս, Խարկովի կրասնոգվոդսկի կայանը՝ 25.000 կիլովտաս, Կադանի կայանը՝ 20.000 կիլովտաս։

Առ 1-ն հունվարի 1931 թվականի մենքունեցինք 210.000 կիլովտաս սահմանյալ ջերմաֆիկացիոն կարողություն, իսկ 1935 թվականին ունենք 870.000 կիլովտաս — աճումն ավելի քան քառապատիկը։

Զերմաֆիկացման չնորհիվ վառելիքի տնտեսումը 1934 թվականին կազմել է ավելիք քան 1 միլիոն տոնն պայմանական վառելիք։ Այդ տարիների ընթացքում ջերմային եներգիայի արտադրությունը Միության մեջ աճել է 6,5 անգամ։ Զերմային եներգիայի ընդհանուր ողտագործման ցանցի յերկարությունը 45 կիլոմետրից առ 1-ն հունվարի 1935 թվականի հասել է 200 կիլոմետրի։ Աճում 4,4 անգամ։

Այդ արդյունքներին հասնելու համար այս չորս տարվա ընթացքում ելեկտրոկայանների կառուցման ու ընդարձակման համար հարկ յեղավ ներդնել 2,665 միլիոն ոռոքի։

Գործող ըրջանային ելեկտրոկայանների հիմնական արտադրական ֆոներն առ 1-ն հունվարի 1931 թվականի կազմում ենին

854 միլիոն ռուբլի, իսկ առ 1-ն հունվարի
1935 թվականի — 2.369 միլիոն ռուբլի:
Այս տարիների ընթացքում Գլավեներդո-
յի գծով կառուցված և շահագործման են
հանձնված հետեւյալ նոր շրջանային ելեկ-
տրոկայանները.

Կաբողոթյունն առ
1-ն հունվարի 1935
թվականի (հազար
կիլովատներով)

Դնեպրոգենը (Ռուկախնայի ԽՍՀ)	434
Զույեվկան (Ռուկ. ԽՍՀ Գոնչարն)	150
Լենինգրադի Կիրովի անվան 8-րդ հիդրո- կայանը (Լենինգրադ)	100
Ստալինոգրավինը (Մոսկվա)	50
Սվիբունը (Լենինգրադ)	72
Կամենսկի Զերժինսկու անվանը (Ռուկ. ԽՍՀ)	48
Ոլիոնգենը (Վլասովան)	48
Կեմերովկայինը (Արևմտյան Սիբիր)	48
ՎՏԻ Կենտրոնական նոր ջերմահեղտուկենոտ- ըոնը Մոսկվա	36
Կրասնոգորսկու կիրավագործունակունը (Խարկով)	25
Վորոնեժինը (Վորոնեժ)	24
Բրյանսկինը (Արևմտյան մարզ)	22

20

Ջոքագենը (Հայաստան)	22,5
Կազմանինը	20
Գիշելդանինը (Հյուս. Կովկաս)	15
Կաղերենսկի Գրեմը	13
Որեխովո-Զույեվոյի Հերմանելեկտրոն-	12, 6
կայանը	
Սարատովի ջերմահեղտուկայանը	12
Կրասնոգրավինը	10,0
Մինսկի ջերմահեղաբուկ,	6, 4
Սևմելպալատինսկի ջերմահեղտուկենոտոնը	3
Շչերենովսկի հիդրոկայանը (Դոնեցկ)	3

Հնդամենը 1.174, 5

Կառուցված և շահագործման են հանձ-
նված շրջանային ցանցում աշխատող հետե-
վայալ խոչոր նոր դորժարանային ելեկտրո-
կայանները.

Կաբողոթյունն
առ 1-ն հունվարի
1935 թ. (հազար
կիլովատներով)

Մագնիսոգորսկի գրենը (Զելյաբենսկի մոլց)	104
Կուզնեցիկ ջերմահեղեղտուկենոտոնը (Արև- մտյան Սիբիր)	84
Բերեզնյակի ջերմահեղեղտուկենոտոնը (Միջին- լովոկի մարզ)	93

21

Կըամատորսկի մեքենաշինական գործա
րանի կենտրոնական եկամուկայանը
(Ուկր. ԽՍՀ) 25

Յարոսլավլի սեգինի կոմբինատի ջերմաե-
լեկտրոկենտրոնը (Խվանովյան մարզ) . . 25

Կըիվոյ Ռոգի մետալուրգիական գործարանի
ջերմաելեկտրոկենտրոնը (Ուկրաինա-
յի ԽՍՀ) 25

Լիպեցիի մետալուրգիական գործարանի ջերմա-
ելեկտրոկենտրոնը (Վորոնեժի մարզ) . . 24

Քորկու ավտոգործարանի ջերմաելեկտրո-
կենտրոնը (Քորկու յերկիր) 24

Մակենայի մետալուրգիական գործարանի
ջերմաելեկտրոկայանը (Ուկրաինայի ԽՍՀ) 24

Ազովստալի ջերմաելեկտրոկայանը (Ուկ. ԽՍՀ) 24

Նիվի հիդրոկայանը (Կարելիա) 15

Խարկովի մակարուրի գործարանի ջերմաելեկ-
տրոկենտրոնը (Ուկրաինայի ԽՍՀ) . . 18

Լուգանսկի շողեքարշային գործարանի
ջերմաելեկտրոկենտրոնը (Ուկր. ԽՍՀ) . . 18

Ուրալի մեքենաշինական գործարանի ջերմա-
ելեկտրոկենտրոնը (Սվերդլովսկի մարզ) . 10

Հնդամենը 508,0

Բնդարձակված են հետևյալ չընանային
կայանները.

Առ 1-ն	Առ 1-ն
հունվ.	հունվ.
1931 թ.	1935 թ.
Կարողո թյունը (հազար կետվատներով)	
Գորկու արձակայանը	64, 0 204
Կաշիրի շրջ. հիդրոկայանը	36, 0 186
Շատուրի շրջ. հիդրոկ.	136 180
Զելյաբինսկի շրջ. հիդրոկ.	27 126
Շաբերովսկի շրջ. հիդրոկ.	64 152
Մակենայի հիդրոկ.	107,5 119,5
Լինինգրադի շրջ. հիդրոկ.	6,5 67,5
Շախտի շրջ. հիդրոկ.	44 90
Իվանովի շրջ. հիդրոկ.	3 99
Կիզենիվսկի շրջ. հիդրոկ.	6 74
Յարուլավի շրջ. հիդրոկ.	8 36
Սևոնի շրջ. հիդրոկ.	29 70
Խարկովյանը	23 28
Կրիվոյ Ռոգինը	20 44
Ոգեսայինը	26,7 37,1
Նիկոլայեվսկինը	7,5 13,6
Սարատովի շրջ. հիդրոկ.	10,5 22,5
Ստոլինգրադի շրջ. հիդրոկ.	27,0 75,0
Կաւերի շրջ. շրջ. հիդրոկ.	5,8 15,2
Բելգրանը	10,0 20,0

Յեղորշինսկի շրջ. հիգրով.	16,5	24,5
Նովո-Սեբերյակինը	5,5	11,5
Զագեսը	13,0	25,0
Դ.իմ—հներդուն	7,5	11,1
Կալինինսկի շեքմաելեկարու- կենտրոնը	4,0	10,0
Պերմի հիգրով.	4,6	8,0
Դոն—եներգոյի Դրինշինսկի հիգրով.	5,0	8,0

Ընդամենն ընդարձակված կայանների գծով	711,6	1.757,4
Ընդարձակված են հետևյալ գործարա- նային խորշը կայանները.		

Առ 1-ն հունվ.	Առ 1-ն հունվ.
31 թ.	35 թ.
Կարողությունը (հազար կիլովատներով)	

Բագվի Կրասնի անվան շրջ. եկեղեցակայանը (Ո.Սֆնչ.)	89,6	169,0
Գրողնու ջերմաեկեղեցարունը (Հյուսիսային Կովկաս)	18,0	67,6
	10,0	25,0

Ընդամենն ընդարձակված կայանների գծով	117,6	201,6
Այս չորս տարիա ընթացքում կառուց- ված նոր շրջանային և արդյունաբերական		

խոշոր կայանների կարողությունն ընդամե-
նը կազմում է 1.682 հազար կիլովատ : Ըս-
դարձակման յենթարկված շրջանային և
գործարանային խոչոր կայանների կարողու-
թյունն այս տարիների ընթացքում 829 հա-
զար կիլովատից հասել է 1.959 հազար կի-
լովատի:

Այսպիսիք են մեր Միության եկեղեցակա-
ֆիկացման արդյունքները : Ելեկտրոկայան-
ները 1934 թվականի սլանը գերակատարել
են 955 միլիոն կիլովատ-ժամով :

Ելեկտրոկայանների հետագա շինարա-
րության ասպարիզում ծանր արդյունաբե-
րության խնդիրն է — 1935 թվականին շրջ-
անային և գործարանային խոչոր ելեկտրո-
կայանների գծով շահագործման տալ 747
հազար կիլովատ նոր կարողություն :

Մենք պետք ենք ասպահովենք յերկրորդ
հնդայակելի պլանի կատարումը և 1937
թվականին մշակենք 38 միլիոն կիլովատ
ժամ ելեկտրական եներգիա, վորից շրջանա-
յին ելեկտրոկայանների գծով՝ 24,5 միլ-
արդ կիլովատ-ժամ :

Շրջանային ելեկտրոկայանների շինարա-
րության մեջ այս տարի ներկրվում է 925
միլիոն ոռութիւն :

Ահա այսպիսիք են հանրագումարները ,

այսպիսիք են նվաճումները : Դրանք փոքր
նվաճումներ չեն և դրանով կարելի յէ հը-
պարտանալ , բայց ելեկտրոկայանների աշ-
խատողները վոչ մի կերպ չպետք ե հան-
դըստանան այդ նվաճումներով :

Առանձին կայանների տեխնիկական հիմ-
նալիք ցուցանիշները յերբեք չպետք ե թագ-
զնեն մեզանից այն , վոր մեր կայաններից
շատ շատերը մինչև այժմ ել դեռ անբավա-
րար են աշխատում : Մենք դիտենք , իսկ մե-
զանից շատ ավելի լավ դիտեն շրջաններում ,
դործարաններում , հանքահորերում , հան-
քավայրերում աշխատող ընկերները , թե
ինչպես հաճախ ընդհատումներ են լինում
եներդիայի հաղորդման մեջ : Մեր ելեկտրո-
կայաններում մինչև այժմ ել շատ հաճախա-
կի ավարիաններ են լինում : Ճիշտ ե , վեր-
ըն յերկու տարվա ընթացքում այստեղ
գտալիք առաջնաղացում կա՝ ավարիանների
գեմ պայքարելու տեսակետից , սակայն վոչ
փոքր համար , այդ թվում ելեկտրոկայան-
ների աշխատողների համար , պարտադիր չե
յերբեք ավարիանների նաև այն թիվը , վորն
այսոր ևս գոյություն ունի մեր ելեկտրոկա-
յաններում : Մենք պետք ե մարտնչենք այն
բանի համար , վոր վերջնականապես դուրս
վոնդենք ավարիանները մեր ելեկտրոկայան-

ներից : Մեր ելեկտրոկայանների աշխատող-
ները պետք ե բոլոր ջանքերը վործ դնեն ,
վորսիսպի բուժեն մեր ելեկտրոկայաններն
այն թերություններից , վոր նրանք ունեն
ներկայումս :

ԱՇԽԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Անցնում եմ ածխարդյունաբերությանը :
Հասցնել ածխի հանուլյին այն մակարդա-
կին , վոր լիովին ապահովվի յերկորի պա-
հանջը , մեքենայացնել ածխի հանուլյը ,
զարգացնել տեղական ածխային շրջանները
և դըսնով իսկ ազատվել հեռակոր վայրե-
րից բերվող ածուխից , զարգացնել կուղնեց-
կի ու Մագնիսոգրամի գործարանների ու-
նընդի աղբյուրը կուզնեցկի ավագանը ,
զարգացնել Կարազանդան և Բուրեյան —
ահա այն խնդիրները , վորոնք դրել ելին
կուսակցությունն ու կառավարությունն
ածխարդյունաբերության ասպարիզում :
Դրանք , ինչպես տեսնում եք , հեշտ խնդիր-
ներից չեն :

1930 թվականին արդյունահանեցինք
48,455 հազար տոնն ածուխ , վորից՝

Դոնբաս	•	•	•	•	36.957 հազ.	տոնն
Մերձմասկ.	ավագ	•	•	•	1.818	»

Ուրալ	.	.	.	2,981	հազ.	տոնն
Կուգնեցկի ավագ	.	.	.	3684	»	»
Արենելյան Սիբիր	.	.	.	1,360	»	»
Հեռավոր Արենելք	.	.	.	1,630	»	»
Մշշին Ասիտա	.	.	.	400	»	»
Կարագանդա	.	.	.	12	»	»
ԱՄՓԽՀ	.	.	.	109	»	»
Մյուս մանր շրջանները	.	.	.	102	»	»

Ածխի այդ հանույթը քաղցի պայուկով եր բավարարում ամբողջ ժողովրդական տնտեսությանը, և խոսք չեր կարող լինել այն մասին, վոր այլպիսի հանույթն ապահովեր յերկրի հարածուն պահանջները:

1934 թվականին մենք տվինք 92 միլիոն տոնն, 1930 թվականի նկատմամբ 190 տոկոս այդ թվում՝

Հազ.	տոնն	Տոկոսը 1930 թ. նկատմամբ
Դռնբաս	.	60,016
Մերձմասովլ-յան ավագան	4,906	162
Ուրալ	.	5,507
Կուգնեցկի ավագան	.	11,584
Արենելյան Սիբիր	.	3,454
Հեռավոր Արենելք	.	2,995
(Վերջին 2 տարվան գտնվում են Հ. Ճ. Փ. Կ.-ի շահագործման մեջ)		183.6

Միջին Ասիտա	999	249,5
Կարագանդա	1830 (իսկ 1930 թվին սիայն 11,900 տոնն)	
ԱՄՓԽՀ	239	219
Մնացած մանր		
Նըջանները	600	606

Ինչպես տեսմում եք, այստեղ հաջողությունն անկասկած եւ: Բայց դրան համելու համար հարկավոր եր չորս տարվա ընթացքում ածխարդյունաբերության մեջ ներդնել 2,622 միլիոն ոռուբլի և ածխարդյունաբերության հիմնական Փոնդերը 1931 թվականի հունվարի 1-ի 511 միլիոն ոռուբլուց մինչև 1935 թ. հունվարի 1-ը հասցնել 1450 միլիոն ոռուբլու: Գետք եր ավարտել 144 նոր շախտերի վարումն ու շահագործման հանձնել գրանք և վերականուցել 32 շախտ՝ 70 միլիոն տոնն տարեկան ընդհանուր հանույթի կարողությամբ, պետք եր ածխարդյունաբերությանը տալ 760 ծանր դայլիկոնող մեքենա, 7,900 ածխահատ մուրճ, 1,275 ելեկտրական դայլիկն, 297 ելեկտրագարշ: Եսկ ամենադիմումունքն եւ համել տիրապետել այդ մեխանիզմներին և համել նրանց բարձր արտադրողականությանը:

Արդյունաբերության վոչ մի ճյուղում բանութի հոսունությունն այնքան չի հարվածել մեղ, ինչպես ածխարդյունաբերու-

թյան մեջ։ Մեխանիզմների յուրացման դժվարությունները, ածխարդյունաբերության այն ժամանակվա հրամանատարական կազմի անբավարար պատրաստությունը և դրանից բղիսող կազմակերպական խառնաշփոթությունը-ածխագործների մեջ, առանձնապես Դռնբասում, բավական ուժեղ տրամադրություններ ստեղծեցին մեխանիզմների և մեքենայացման դեմ։ Յե՞րբ կտիրապետես նոր մեխանիզմներին՝ հայտնի չե, յե՞րբ կկարողանաս կազմակերպել այդ մեխանիզմների կանոնավոր խնամքը՝ հայտնի չե, յե՞րբ կտան մեղ այդ մեխանիզմները և նրանց բոլոր անհրաժեշտ պահեստի մասերը, հայտնի չե։ ուստի ավելի լավ չե՞ արդյոք քշել հագարակոր ու տասնյակ հաղարակոր բանվորներ և գրանով առաջ տանել հանույթը։ այսպես ելին դատում այն ժամանակվա շատ ու շատ զեկավարներ։

Այդ դիրքը սնանկ դուրս յեկալ։ Այդ տրամադրություններին, այն ժամանակական կազմակերպական խառնաշփոթությանը, զեկավարման գրասենեկային-բյուրոկրատիկ մեթոդին ջախջախիչ և մահացու հարված հասցրեց մեր կուսակցության կենարոնական կոմիտեյի և Միության ժողովության մեջ, առանձ-

1933 թ. ապրիլի 8-ի վորոշումը։ Այդ վորոշումից հետո մեր ածխարդյունաբերության զարգացումն առողջ ուղղությամբ վրա դըրվեց։ Ածխարդյունաբերական Դռնբասը, մեր կուսակցության կենարոնական կոմիտեյի ուժովկոմիորհի վորոշման հիման վրա, Ուկրաինայի բոլոր կազմակերպությունների, մանավանդ Ուկրաինայի կոմիտեսի Դոնեցի մարզումի ու նրա ղեկավարների հսկայականությամբ 1934 թ. կատարեց ածխի հանույթի ծրագիրը, տալով 60 միլիոն տոնն ածուխ և գրանով իսկ ապահովեց մեր ժողովրդական տնտեսության և մասնավորապես Ուկրաինայի մետաղարդյունաբերության նորմալ զարգացումը։ (Ծափեր)։

Մեր Խորհրդային Միության ածխարդյունաբերական ըրջանների խնդիրն ե՝ 1935 թվականին տալ 112,2 միլիոն տոնն ածուխ, վորից ծանր Արդյունաբերության ժողովածություն պահպան տանը 104,1 միլիոն տոնն։ Դռնբասը պետք է տա 68 միլիոն տոնն, Կուգնեցկի ավագանը 14 միլ. տոնն, Մերձմոսկովյան շրջանը՝ 7 միլիոն տոնն, Ուրալուգովը՝ 7 միլիոն տոնն, Կարագանդան՝ 2.5 միլիոն տոնն, Արևելյան Սիբիրը՝ 2,6 միլիոն տոնն, Կիրովոգործքը՝ 1350 հազ. տոնն, Տղվարչելին

առաջին անգամ պետք է տա 150 հազար
տոնն, Տղվիբուլին 350 հազ. տոնն:

Յերկրորդ հնդամյակի վերջերին մենք
պետք է տանք 152,5 միլիոն տոնն ածուխ:
Դա հեշտ խնդիր չէ, բայց միանդամայն
իրազործելի յէ:

Հարկավոր է միայն մի բան՝ աշխատել
ամելի լավ, քան ոչխատում ենք այսոր:
Մեզ մոտ առվորաբար այսպես է լինում—
յեթե ծրագիրը կատարում են, ապա գուա-
նում են, վոր հիանալի յին աշխատում:
Յերբ արդյունաբերության այս կամ այն
ճյուղը, այս կամ այն ձեռնարկությունն իր
ծրագիրը կատարել է, և դու մոտենաս նրան
ու ասես, թե՝ ծրագիր՝ հա, կատարել ես,
բայց այնպես լավ չես աշխատում, ինչպես
պետք է, — ապա մարդիկ ապջում են, ձեռնե-
րը տարածում է տառում՝ ի՞նչպես թե, մենք
ծրագիրը կատարել ենք և այնքան լավ չե՞նք
աշխատում, ի՞նչպես կարող ե պատահել
այդ:

Այս՝ շատ պարզ է:

Մենք զինված ենք հիանալի տեխնիկա-
յով: Մեր գործարանները, մեր շախտերը,
մեր Փաբրիկանները, զինված են ժամանա-
կակից այնպիսի հիանալի տեխնիկայով, վո-
րը վոչ մի յերկիր չունի: (Բուլն ծափեր):

Բայց դուք կարող եք հարց տալ՝ ինչ-
պի՞ս ե, վոր վոչ մի յերկիր այնպիսի բարձր
տեխնիկա չունի, ինչպես մենք: Վո՞րտեղից
ենք վերցրել մենք այդ տեխնիկան:

Մենք ամերիկացիներից, գերմանացինե-
րից, Փրանսացիներից, անգլիացիներից
գնել ենք ամենակատարելագործված մեքե-
նաները, համաշխարհային տեխնիկայի ամե-
նագիրջին նվաճումները, և դրանցով զի-
մել ենք մեր ձեռնարկությունները: Իսկ
նրանց մոտ շատ զործարաններ ու շախտեր
զինված են 19-րդ դարի և 20-րդ դարի
սկզբի մեքենաներով: Մեր հիմնական կա-
պիտակ՝ այն միլիարդները, վորոնց մա-
սին խոսեցի յիս, այդ լավագույն տեխնի-
կան ե, վոր գոյություն ունի աշխարհում:

Ինչի՞ց ենք յենում մենք, յերբ մեր
ածխագործներին ասում ենք՝ այս տարի
դուք վաստ չեք աշխատել, դուք ծրագիրը
կատարել եք, բայց պետք ե ավելի լավ աշ-
խատեք: Մենք յելում ենք այն բանից,
վոր նրանց ձեռքում գտնված մեքենաները,—
այն գայլիկոնող մեքենան, այն ածխահատ
մուրճը, այն երեկորոքարշը, վոր ունենք
մենք — այդ մեքենաները մինչև այժմ ել
այնպես չեն ոգտագործվում, ինչպես հար-
կավոր ե:

Ածխարդյունաբերությունը կատարեց իր
ծրագիրը և ապահովեց յերկիրն ածխով:
Մենք քաղցի պայունով չենք ապրում՝ այդ
ճիշտ են: Սակայն ինչպես են ոգտագործ-
վում գայլիկոնող մեքենաները: Գայլիկո-
նող մեքենաներն ոգտագործվում են
մետայն 74 տոկոսով, իսկ ունեցած գայլիկո-
նող մեքենաների 26 տոկոսը բոլորովին չէ
աշխատում: Ածխահառմուրճերն ոգտա-
գործվում են միայն 49 տոկոսով, կեսից
պակաս, ելեկտրոքարչերը՝ միայն 71 տոկո-
սով, իսկ վարտեղ ե 29 տոկոսը: — ան-
գործ կանգնած են: Մենք ներդրել ենք վոս-
կի, մենք ներդրել ենք մեր աշխատանքը,
վորպեսզի հարավորություն ունենանք աշ-
խատելու ոոր մեխանիզմներով, իսկ նրանք
անգործության են մատնվել: Ինչո՞ւ, ի՞նչ
հիման վրա: Մեր հիմանալի աշխատանքի
չնորհիվ: Վո՞չ, չնորհիվ այն հանդամանքի,
վոր մենք գեռ լիովին չենք տիրապետել
այդ տեխնիկային: Այնինչ, մենք պետք ե
լիովին տիրապետենք նրան, ինչ դնով ել
լինի:

Իսկ ի՞նչ են տալիս այն գայլիկոնող մե-
քենաները, վորոնք աշխատում են:

Գայլիկոնող մեքենայի ամսական միջին
արտադրականությունը Դոնքառում (յես

վերցնում եմ այն լավագույն չրջանը, վորը
կատարում ե ծրագիրը) կադմում ե 2700
տոնն: Սա առավելագույն չա՞փն ե, թէ
վոչ: Յեթե սկսենք խոսել ածխագործների
հետ, նրանք կասեն՝ կհասցնենք 3000-ի,
մինչև 3200-ի: Իսկ ի՞նչ կասեք այսպիսի
փաստերին: Ահա Մենքինակու անվան շախ-
տում (Կադիելուդոլ) «Ատաման» ածխա-
շերտում կա գայլիկոնող մեքենայի մի
մեքենապար, — վոչ թե ամերիկացի, վոչ
թե ֆրանսացի, վոչ թե գերմանացի, վոչ
ել նույնիսկ «արթական ծաղումով» (ծի-
ծաղ), այլ համարակ աղդամունով մեկը՝
ընկեր Տելնիխը և այդ ընկի Տելնիխն ամ-
սական տալիս ե 10.000 տոնն՝ 2700 տոննի
փոխարեն: (Ծափեր: Զայներ տեղերից՝
նա համագումարի պատղաժավոր ե): Ա-
յո՛, Տելնիխը համագումարի պատղամա-
շոր ե:

Վերցնում եմ իլյիչի անվան շախտը.
Գայլիկոնող մեքենայի մեքենապար Տկաչեն-
կոն 2700 տոննի փոխարեն տալիս ե 9000
տոնն: Վերցնում եմ մի այլ շախտ՝ Դիմիտ-
րովի անվան № 5-6 շախտը (Ստալինու-
գոլ): Բնիկ. Ժուկովը տալիս ե 11.700 տոնն:
(Ծափեր):

Ուրեմն ի՞նչպես պետք ե աշխատել:

Այսպես, ինչպես այժմ աշխատում ենք մենք, թե՞ այսպես, ինչպես աշխատում են Տեղիիլը, Տկաչենկոն, Ժուկովը։ Յես կարծում եմ, վորդ գրան կարելի յէ տալ մի պատափան՝ աշխատել այնպես, ինչպես աշխատում են Տեղիիլը, Տկաչենկոն, Ժուկովը։ (Յերկարասև ծավիեր)։ 2700 տոնն և 11700 տոնն՝ ինչպիսի հսկայական ռեզերվ։ Յեվ յերբ մենք խոսում ենք ռեզերվի մասին, ապա խոսում ենք վոչ թե ընդհանուր ագխտացիայի կարգով, այլ յելնելով այսպիսի փաստերից։

Նույն պատկերն ունի նաև ածխահատմուրճերի աշխատանքը։ Մի ածխահատմուրճի միջին արտադրականությունը մի հերթափոխության ժամանակ այդ նույն Դոնդասում 1934 թ. կազմել է 6,5 տոնն։ № 4/2 շախտում (Կաղիեվուգոլ-ի) ընկ. Գրիշինը մի քանի անգամ տվել է 85-ական տոնն՝ 6,5 տոննի փոխարեն։ Ընկ. Ռյաբուշապկան (Արտյոմուգոլ-ի Զերժինսկու անվան շախտը) տվեց 40 տոնն։ Ածխագործներին լավ հայտնի ընկ. Մուրաշկոն (Արտյոմուգոլ-ի «Կարմիր Պրոֆինտերն» շախտան) տվեց 50 տոնն և այդ արտադրանքը նա տալիս է մի քանի ամսվա ըն-

թացքում։ Նման որինակներ կան նաև մյուս ածխային շրջաններում։

Դռնբասում 1934 թ. ելեկտրոքարշի ամսական միջին արտադրականությունը կազմում է 7940 տոնն-կիլոմետր։ Իսկ Արտյոմում՝ շախտում մեքենավար ընկ. Զերենիչենկոն տալիս է 30·000 տոնն-կիլոմետր, Դիմիտրովի անվան շախտում (Ստալուգոլ)՝ մի ելեկտրոքարշը տալիս է 20·000 տոնն-կիլոմետր, № 19/20 շախտում (Արտյոմուգոլ)՝ 12,000 տոնն-կիլոմետր։ Այսպես ուրեմն 7900—30·000—20·000—12·000 տոնն-կիլոմետր։ մտածեցե՞ք, ընկերներ, ինչպիսի հսկայական ռեզերվներ կան այսուեղ։

Սովորենք աշխատել այնպես, ինչպես աշխատում է ընկ. Զերենիչենկոն, և ելեկտրոքարշի փոխադրունակությունը կը կրկնապատկվի ու կեռապատկվի։

Մեր արամագրության տակ կա հզոր առաջնակարգ տեխնիկա, և յեթե մենք սովորենք ոգտագործել այդ տեխնիկան այնպես, ինչպես անում են ընկեր Զերենիչենկոն, Տկաչենկոն, Տեղիիլը և Ժուկովը, ապա մենք կունենանք արտադրանքի մի հըսկայական աճ, վորի առջև կնաեմանան այն

բոլոր աճերը, վոր ունենք մենք այժմ և
վորով հպարտառում ենք:

Յերբ ասում են, թե պակասում ե այս
կամ այն բանը, ուստի չենք կարողանում
կատարել ծրագիրը, դա սխալ է: Յերբ
մարդիկ աշխատում են ինչպես հարկն ե,
դործը լալ ե գնում, ամեն ինչ հերիք ե
անում: Հենց վոր վրիպում են, ձախողում,
զանդատներ են սկսվում, թե պակասում ե.
չե՞ վոր պետք ելորեւ մեկ ուրիշն մեղադ-
րել, անհարմար ե իրեն մեղադրել: Իսկ
ի՞նչպես եք կարողացել դուք ոդտագործել
այն, ինչ վոր տվել են ձեզ — ահա թե
սոսքն ինչիք մասին ե:

Յես կարծամ եմ, վոր մենք հնարավո-
րություն ունենք վոչ միայն կատարելու
1935 և 1937 տարվա պլանը, այլև բոլոր
տեխնիկական հնարավորություններն ու-
նենք այդ պլանը գերակատարելու: Այսեն
ինչ կախված ե նրանից, թե մարդիկ ի՞նչ-
պես են յուրացնում տեխնիկան, ինչ-
պես են աշխատում: Այդ ամբողջովին մեր
ձեռքումն ե: 1931 թ. ամառը հպարտու-
թյամբ հնչեցին ընկ. Ստալինի հետևյալ
խոսքերը՝ «Մեր ծրագրի իրական լինելը
դա կենդանի մարդիկ են, այդ մենք ենք
ձեզ հետ»:

Միթե աշխատանքի այն հիմնալի օրի-
նակները, վոր բերեցի յես, փայլուն կեր-
պով չեն հաստատում այդ խռոքերը:

Յես կարծում եմ, վոր մեր ածխային
ավագանների կուսակցական կազմակերպու-
թյունները, վորոնք միշտ շատ ուժեղ են
ոգնում մեր աշխատանքին, կողնեն մեր ած-
խագործներին՝ տիրապետելու առաջնակարդ
այն տեխնիկային, վորով նրանք դիմուել են:
Իսկ տիրապետելով նրան, ինչպես հարկն
ե, մենք շատ ավելի ածուխ կտանք:

Այժմ մենք փորձնական աշխատանք ենք
կատարում ածխի ստորերկրյա գաղացման
ասպարիգում: Կան մի քանի նշաններ, վոր
այդ գործը կարող ե հաջողվել, սակայն
առայժմ դժվար ե ասել, թե նա անպայման
կհաջողվի:

Կեմերովոյում մենք կատուցեցինք ած-
խաթորման գործարան՝ 10.000 տոնն հե-
ղուկ վառելանյութի համար և նավթամլ-
թերք ենք ստանալու ածխից: Ընկեր նավ-
թագործներ, լսեցիք, մենք նավթամթերք
կտանանք ածխից և ձեզ համար նոր «մըր-
ցակիցներ» հանդես կդան:

բոլոր աճերը, վագ ունենք մենք այժմ և
վորով հպարտանում ենք:

Յերբ ասում են, թե պակասում ե այս
կամ այն բանը, ուստի չենք կարողանում
կատարել ծրագիրը, դա պատասխ է: Յերբ
մարդիկ աշխատում են ինչպես հարկն ե,
դործը լավ ե դնում, ամեն ինչ հերիք ե
անում: Հենց վոր վրիպում են, ձախողում,
դանդատներ են սկսվում, թե պակասում ե.
Հե՞ վոր պետք եվորեն մեկ ուրիշին մեղադ-
րել, անհարմար ե իրեն մեղադրել: Իսկ
ի՞նչպես եք կարողացել դուք ոգտագործել
այն, ինչ վոր տվել են ձեզ — ահա թե
խոսքն ինչիք մասին ե:

Յես կարծամ եմ, վոր մենք հնարավո-
րություն ունենք վոչ միայն կատարելու
1935 և 1937 տարվա պահնը, այլև բոլոր
տեխնիկական հնարավորություններն ու-
նենք այդ պահնը գերակատարելու: Այսն
ինչ կախված ե նրանից, թե մարդիկ ի՞նչ-
պես են յուրացնում տեխնիկան, ինչ-
պես են աշխատում: Այդ ամբողջովին մեր
ձեռքումն է: 1931 թ. ամառը հպարտու-
թյամբ հնչեցին ընկ. Ստալինի հետևյալ
խոսքերը՝ «Մեր ծրագրի իրական լինելը
դա կենդանի մարդիկ են, այդ մենք ենք
ձեզ հետ»:

Միթե աշխատանքի այն հիմնալի օրի-
նակները, վոր բերեցի յես, փայլուն կեր-
պով չեն հաստատում այդ խոսքերը:

Յես կարծում եմ, վոր մեր ածխային
ավագանների կուսակցական կազմակերպու-
թյունները, վորոնք միշտ շատ ուժեղ են
որնում մեր աշխատանքին, կողնեն մեր ած-
խագործներին՝ տիրապետելու առաջնակարգ
այն տեխնիկային, վորով նրանք զինվել են:
Իսկ տիրապետելով նրան, ինչպես հարկն
ե, մենք շատ ալելի ածուխ կտանք:

Այժմ մենք փորձնական աշխատանք ենք
կատարում ածխի ստորերկրյա գաղացման
արագարիզում: Կան մի քանի նշաններ, վոր
այդ գործը կարող ե հաջողվել, սակայն
սուայժմ դժվար ե ասել, թե նա անպայման
հհաջողվի:

Կեմերովոյում մենք կասուցեցինք ած-
խաթորման գործարան՝ 10.000 տոնն հե-
ղուկ վառելանյութի համար և նախթամը-
թերք ենք ստանալու ածխից: Ընկեր նախ-
թագործներ, լսեցեք, մենք նավթամթերք
կստանանք ածխից և ձեզ համար նոր «մըր-
շակիցներ» հանդիս կդան:

ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Անցնում եմ նավթարդյունաբերությանը: Կերպուինի, բենզինի ու յուղերի պահանջն ավելանում ե և ավելանալու յետարեց-տարիի: Մեր յերկրի տրակտորացումը և ավտոմոբիլացումը, մեր ավիացիան, մեր շոգեքարշերը, մեր մարտեններն այսոր պահանջում են և վաղն ավելի մեծ քանակությամբ պահանջելու յեն նավթային վառելանյութ: 1934 թվականին մենք պինք 72 հազար ավտոմոբիլ, 1935 թվականի պլանը կազմում է 92 հազար ավտոմոբիլ: Բայց չե՞ վոր դա մի կաթիլ ե ծովում: Ամերիկայի ավտոմոբիլային պարկը 25 միլիոն ավտոմոբիլ ե: Դեռ վորքան ավտոմոբիլ պետք է արտադրենք, վոր հասնենք Ամերիկային և վորքան նավթ ու բենզին արտադրենք, վոր սնումնդ տանք այդ ավտոմոբիլներին:

1934 թ. մենք արտադրեցինք 93 հազար տրակտոր, 1935 թվականին մենք պետք ե տանք 97 հազար: Կոլտնտեսությունների ու խորհնտեսությունների դաշտերում աշխատում ե 311 հազար տրակտոր: Այդ բոլորը պահանջում են հսկայական քանակությամբ վառելանյութ, և մենք պետք ե բա-

վարարենք այդ պահանջը: Կարո՞ղ ենք արդյոք մենք բարձրարել այդ պահանջները: Յերկրաբանական հետախուզական վարչության պետ ակադեմիկոս Գուրեկինի տվյալներով Միության մեջ նավթի ընդհանուուր պաշարը ներկայումս կազմում է 3 միլիարդ տոնն (իսկ մենք 1934 թվականին արդյունահանեցինք 25,6 միլիոն տոնն): 3 միլիարդ տոնն կամ նավթի համաշխարհային ամբողջ պաշարի 32 տոկոսը, մի քան, վոր ԽՍՀՄ-ին առաջին տեղն ե զնուած աշխարհում՝ նավթի բնական պաշարով: Այդ թվից բազվում և նրա ըլցաններում մենք ունենք մի միլիարդ 325 միլիոն տոնն, Եմբանեվթում — 639 միլիոն տոնն, Իշխանությունում — 60 միլիոն տոնն, Մայկոպում — 81,8 միլիոն տոնն, Գրոզնիում — 138 միլիոն տոնն, Մէջին Ասիխյում — 240 միլիոն տոնն, իսկ դեռ վորքան չհետախուզակած ված տարածություն կա մեր յերկրում:

Մեր ընդերքում նավթ շատ կա: Այդ հսկայական պաշարները մեզ հնարավորություն են տալիս — յեթե մենք ինչպես հարկն ե աշխատենք — ստանալ այնքան նավթ, վորքան հարկավոր ե մեր յերկրի համար՝ ներառյալ նաև մեր արտահանությունը: Դեռ յերեկ խորհանդակային արտադր-

բության խողովակների թւ օֆքավորման
պակասությունը հնարավորություն չեր
տալիս աշխատանք ծավալել այն չափով,
վորքան անհրաժեշտ և մեզ : Ստիպված ե-
յինք խողովակները և սարքավորումը ներ-
մուծել արտասահմանից և վոսկի վճարել:
Ներկայումս այդ պատճառը մասամբ վե-
րացված ե կամ վերացվում ե և մենք բո-
լոր հնարավորություններն ունենք մեր հայ-
րենի խողովակներով, մեր հայրենի սար-
քավորմամբ լայնորեն ծավալել նավթար-
դյունաբերությունը :

Չորս տարվա ընթացքում նավթարդյու-
նաբերության մեջ մենք ներդրել ենք 2 մի-
լիարդ 135 միլիոն ռուբլի: 1934 թ. ար-
դյունահանվել ե 25 միլիոն 600 հազար տոնն
նավթ և գազ՝ 135,9 տոկոս 1930 թվականի
համեմատությամբ, այս թվում Աղնելիթը
տվել ե 20 միլիոն 200 հազար տոնն, դերա-
կատարելով իր տարեկան ծրագիրը:

Նավթի ու գազի համույթի 1935 թվա-
կանի ծրագիրը կազմում ե 30 միլիոն 300
հազար տոնն: 2-րդ հնդամյակի վերջին
հազար տոնն 46 միլիոն 800 հազար
մենք պետք ե տանք տանք միլիոն 580 հազար մի-
լիարդ է փորենք մի միլիոն 580 հազար մի-
լիարդ, շահագործման հանձնենք խողովակա-
վոր 6 նավթագոտիչ դործարան, 14 կրեկինդ

և խողովակաշար անցկացնենք 1600 կիլո-
մետր յերկարությամբ:

Մեր տնտեսության բոլոր ճյուղերից ա-
ռաջինը նավթարդյունաբերությունն եր,
վոր դեռ 1923—24 թվականներին սկսեց
վճռաբար անցնել աշխատանքի ամերիկյան
մեթոդներին և ամերիկյան տեխնիկային:
Այդ աշխատանքն այն ժամանակ իր պտուղը
տվեց՝ նավթագործներն իրենց հնդամյակը
կատարեցին 2 ու կես տարում, և մեր կու-
սակցությունն ու կառավարությունը նավ-
թագործների հաղթանակը նշեցին բարձրա-
գույն պարզեսով, տալով նրանց կենինի
շքանշանը: Սակայն դրանից հետո նավթա-
գործների մեջ վորոշ հանդստացում առա-
ջացավ: Բանը հասկացան այնպես, քանի
վոր կարողացել են հնդամյակը 2 ու կես
տարում կատարել, ասկա այնուհետև գործն
ինքնահոսով առաջ կդնա: Բայց, ինչպես
հայտնի յե, ինքնահոսով չի կարելի վոչ մի
բանի հասնել, առավել ևս՝ չի կարելի սո-
ցիալիզմ կառուցել:

Տարվելով Գրողնու շատրվաններով,
այնտեղ աչքաթող արին նոր նավթաշերտերն
ու նոր նավթաբեր հողամասերի հետախու-
զական աշխատանքները և դրա համար խրս-
տիվ պատժվեցին: 1934 թվականին Գրողնու

ըուլթյան խողովակների ու օտքավորման
պակասությունը հնարավորություն չեր
տալիք աշխատանք ծավալել այն չափով,
վորքան անհրաժեշտ ե մեզ։ Սովորված ե-
յինք խողովակները և սարքավորումը ներ-
մուծել արտասահմանից և վասկի վճարել։
Ներկայում այդ պատճառը մասամբ վե-
րացված ե կամ վերացվում ե և մենք բո-
լոր հնարավորություններն ունենք մեր հայ-
րենի խողովակներով, մեր հայրենի սար-
քավորմամբ լայնորեն ծավալել նավթար-
դյանաբերությունը։

Չորս տարվա ընթացքում նավթարդյու-
նաբերության մեջ մենք ներդրել ենք 2 մի-
լիարդ 135 միլիոն սուբլի։ 1934 թ. ար-
դյունահանվել ե 25 միլիոն 600 հազար տոնն
համբ և գաղ՝ 135,9 տոկոս 1930 թվականի
համեմատությամբ, այդ թվում Աղնելիթը
տվել ե 20 միլիոն 200 հազար տոնն, դերա-
կատարելով իր տարեկան ծրագիրը։

Նավթի ու գաղի հանույթի 1935 թվա-
կանի ծրագիրը կազմում ե 30 միլիոն 300
հազար տոնն։ 2-րդ հնդամյակի վերջին
մենք պետք ե տանք 46 միլիոն 800 հազար
տոնն նավթ և գաղ։ 1935 թվականին մենք
պետք ե փորենք մի միլիոն 580 հազար մե-
տր, չահագործման հանձնենք խողովակա-
վոր 6 նավթագոտիչ դործարան, 14 կրեկինդ

և խողովակաշար անցկացնենք 1000 կիլո-
մետր յերկարությամբ։

Մեր տնտեսության բոլոր ճյուղերից ա-
ռաջինը նավթարդյունաբերությունն եր,
վոր դեռ 1923—24 թվականներին սկսեց
վճռաբար անցնել աշխատանքի ամերիկյան
մեթոդներին և ամերիկյան տեխնիկային։
Այդ աշխատանքն այն ժամանակ իր պտուղը
տվեց՝ նավթագործներն իրենց հնդամյակը
կատարեցին 2 ու կես տարում, և մեր կու-
սակցությունն ու կառավարությունը նավ-
թագործների հաղթանակը նշեցին բարձրա-
գույն պարզեով, տալով նրանց լենինի
շքանշանը։ Սակայն դրանից հետո նավթա-
գործների մեջ վորոշ հանդստացում առա-
ջացալ։ Բանը հասկացան այնպես, քանի
վոր կարողացել են հնդամյակը 2 ու կես
տարում կատարել, ապա այնուհետև գործն
ինքնահոսով առաջ կդնա։ Բայց, ինչպես
հայտնի յէ, ինքնահոսով չի կարելի վոչ մի
բանի հասնել, առավել ևս՝ չի կարելի սո-
ցիալիզմ կառուցել։

Տարվելով Գրողնու շատրվաններով,
այնտեղ աչքաթթող արին նոր նավթաշերտերն
ու նոր նավթաբեր հողամասերի հետախոռ-
ութական աշխատանքները և դրա համար խըս-
տիվ պատշփեցին։ 1934 թվականին Գրողնու

Նավթագործները տվին 3 միլիոն 594 Հա-
զար տոնն նավթ՝ 1930 թ. 7 միլիոն 149
հազար տոննի դիմաց :

Մեզ մոտ բոլոր ճյուղերը հաղթականո-
րեն առաջ են գնում, իսկ Գրողնելիթը գե-
րադասեց հետագարձ ընթացքը :

Ի՞նչ թերություններ կան նավթարդյու-
նաբերության մեջ և վո՞րն ե հիմնական
թերությունը: Այդ թերությունը, ընկեր-
ներ, նախ և առաջ և ամենից առաջ ան-
թույլատրելի չափով դանդաղ փորելն ե:
Մենք անթույլատրելի չափով դանդաղ ենք
փորում, մենք հաճախ բարբարոսաբար և
անկույլտուրական կերպով ենք չահագոր-
ծում գործող հորերը: Վերցնում եմ մեր
նավթարդյունաբերության բոլոր շրջաննե-
րից լավագույնը՝ Բագվի շրջանը: Ազնեվ-
թը 1934 թվականին պլանը կատարեց, պլ-
լանը կատարել եր նաև 1933 թվականին:

Ազնեվթը 1934 թվականին տվեց 4 միլիոն
տոնն աճ, վորը յերբեք չի տվել Բագվի
նավթարդյունաբերությունը: (Ծախեր):

Ազնեվթը 1934 թվականին տվեց 20 մի-
լիոն 200 հազար տոնն, իսկ 1930 թվակա-
նին տվել եր 10,7 միլիոն տոնն՝ աճումը
88 տոկոս: Յեվ այնուամենայնիվ — թող
Բագվի ընկերները չեն կանան ինձանից —

յևս կարծում եմ, վոր նրանց որինակով
մենք պետք ե սովորենք՝ ինչպես չպետք ե
աշխատել: (Ծիծաղ):

Իհարկե փորման բնագավառումն ել
մենք միենույն տեղում կանգնած չենք:
Վերցնում եմ դարձյալ Ազնեվթը: 1930
թվականին Ազնեվթում փորման բոլոր բը-
նագավառներում արագությունը մի դար-
դյահի համար ամսական կազմում եր 87,9
մետր, իսկ 1934 թվականին՝ 187,6 մետր:
Շահագործագան փորումը 1930 թ. կազմում
եր 107,7 մետր, իսկ 1934 թվականին՝ 216,8
մետր: Ինչպես տեսնում եք, աճումը մեծ
է՝ կը կնապատիկ: Իսկ համեմատած ամե-
րիկյան արագության հետ, — դա կրիայի
քայլ ե: 1200—1500 մետր խորություն ու-
նեցող նավթահորերն ամերիկացիք փորում
և շահագործման են հանձնում մի ամսվա-
ընթացքում, իսկ մենք այդպիսի նավթա-
հորերը փորում և շահագործման ենք հանձ-
նում լավագույն դեպքում 4—5 ամսվա ըն-
թացքում, իսկ յերբեմն ել մի տարում և
նույնիսկ ավելի յերկար ժամանակամիջո-
ցում: Մենք համարյա չդիտենք ինչպես
հարկն ե փորել 1500 մետրից ավելի խորու-
թյուն ունեցող նավթահորերը, իսկ ամերի-

կացիք ազատ կերպով փողում են 2000—
2500 մետր խորությամբ նավթահորեր
այդ խորություննեց նավթ են քաշում :

Այստեղ հաճախ առում են՝ ամերի-
կացիք այլ սարքավորում ունեն, և այն,
ինչ վոր կարող ե անել ամերիկացին, մենք
ե վիճակի չենք անելու : Մեր բոլոր ըրջան-
ների նավթագործների մեջ այդպիսի խո-
սակցություններ լինում են : Հաճախ կարե-
լի յե լսել այսպիսի խոսակցություն .—ամե-
րիկացուն ի՞նչ, ամերիկացին նստած ե իր
համար հորի մոտ և յեթե նրան պետք լինի
տեխնիկան վորեկ ժամանկարարում՝
խողովակ կամ մի այլ բան, նա
հեռախոսով պատվիրում ե և նրան բե-
րում են, իսկ մեղ մոտ վորքա՞ն պետք ե
տանջվել : Ամերիկացիներն ունեն չորս ա-
րագությամբ աշխատող ամբարձիչներ, ա-
մերիկացիներն ունեն հուժկու պոմպեր, ա-
մերիկացիների խողովակներն այլ են, իսկ
մեղ մոտ . . . ամերիկացիք ո՞ւր, մենք ո՞ւր :

Իհարկե, այսպիսի խոսակցությունները
բանի պետք չեն : Դրանք հետամնաց մարդ-
կանց խոսքակցություններ են և, իհարկե,
մենք չպիտի հավասարվենք նրանց : Մենք
կհավասարվենք նրանց, ովքեր գիտեն աշ-
խատել : Բադվի ըրջանի առանձին բրիգադ-

ների լավ աշխատանքի որինակը վկայում
և այն մարդկանց անանկությունը, վորոնք
չաղակրատում են, թե հնարավոր չե հասնել
փորձան լավագույն ցուցանիշների :

Մինչդեռ 1934 թվականին փորձան տա-
րեկան միջին արագությունը կազմում
եր ամիսը 216,8 մետր մի դազգյահի հա-
մար, Ստալինյան ուսյոնում փորձան խմբի
պետ ընկ, հարայելին ինն ամսում փորել ե
հինգ հոր՝ յուրաքանչյուրը 1.000 մետրից
ամելի խորությամբ և ամսական 300 մետ-
րից ավելի արագությամբ՝ յուրաքանչյուր
գահագյահի համար : Միջինը 216,8, իսկ
այստեղ 300 մետր : Առանձին հորերում վոչ
արտադրական ժամանակը տատանվել ե
3—4 տոկոսի միջև, մինչդեռ Ադնեվթում՝
գոչ արտադրական ժամանակը 1934 թվա-
կանին կարել և միջին հաշվով 32 տոկոս :

Ազիզբեկովի անվան նավթահանքերի
(Կալա) վորող խմբի պետ ընկ. Հովհան-
նիսյանը 1.190 մետր խորությամբ № 162
նավթահորը փորեց ամսական 517 մետր
արագությամբ և վոչ արտադրողական ժա-
մանակն իջեցրեց 17 տոկոսի :

Նույն Հովհաննիսյանը 1.180 մետր խո-
րություն ունեցող № 161 նավթահորը փո-
րեց ամիսը 513 մետր արագությամբ և վոչ

արտադրողական ժամանակն իջեցրեց 6 տուկոսի, իսկ 1.155 մետր խորություն աւնեցող № 165 նավթահորը փորեց ամսական 502 մետր արտադրությամբ (վոչ արտադրողական ժամանակը՝ 15 տոկոս): Ենթ, վերջաղես, 1.150 մետր խորություն ունեցող № 208 նավթահորը նաև փորեց ամսական 575 մետր արտադրությամբ, լնդ վորում, վոչ արտադրողական ժամանակը կազմեց 14 տոկոս :

Ընկեր Կառանովիչի անվան նավթահանքերում ընկ. Կարպենկոն 1.400—1460 մետր խորություն ունեցող նավթահորերը փորեց ամսական 340—360 մետր արագությամբ, ունենալով վոչ արտադրողական ժամանակի կորուստ 8—15 տոկոս :

Միենույն ժամանակ Լոկ-Բատանուսմ, վորտեղ խորությունն ամելի քիչ ե, քան մյուս շրջաններում, 1934 թվականին տասն ամսվա մեջ արագությունը կազմել է 193 մետր, վորոշ ամիսներում, —ինչպես սեպտեմբեր ամսվին, —ինեւով մինչև 93 մետրի : Վոչ արտադրողականորեն կորած ժամանակը. (ոգոստոս-սեպտեմբեր ամիսներին) հասնում է 48—50 տոկոսի, այսինքն՝ ժամանակի կեսը չեն աշխատել:

Բագվի ընկ. Ստալինի անվան նավթա-

հանքի փորող վարպետ Ավանեսովիլը տասն ամսվա ընթացքում հանձնել է 5 նավթահոր, ամսական 500 մետր միջին արագությամբ մի դազդյահի համար: Բագվի ընկ. Կադանովիչի անվան նավթահանքի փորող վարպետ Մուսեյիբ-Դումյան №260 նավթահորը փորել է 774 մետր արագությամբ: Այդ բագվում :

Բայց ահա Մայկովը: Փորող վարպետ ընկ. Զուգայեվը № 144 նավթահորը, 1.260 մետր խորությամբ, փորել է 38 որում: Փորող վարպետ ընկ. Մելնիկովիլը № 121 նավթահորը փորել է ամսական 634 մետր արագությամբ, փորող վարպետ ընկ. Վոլկովը՝ ամսական 624 մետր արագությամբ, ընկ. Պասկեվիչը՝ 535 մետր, ընկ. Ուսովը՝ 470 մետր արագությամբ:

Գրողնելթում ընկ. Յեսարի բրիգադը Մալդոբեզում 812 մետր խորությամբ նավթահորը փորել է ամսական 540 մետր միջին արագությամբ: Ահա, ընկերներ, թվերի միջինը՝ 216,8 առանձին բրիգադներում:

Ինչո՞ւմն ե բանը: Յեա հարց ու փորձ եմ արել այդ փորող վարպետներին: Պատասխանը պարզ եր. կազմակերպել են լավ բրիգադ, ճիշտ են դասավորել մարդ-

կանց, լավ են կողմակերպել աշխատանքը, աւագահովել են սարքավորման ու խողովակութիւնը լավ խնամքը և ստացվել են լավ արդյունքներ :

Այդ նշանակո՞ւմ ե արդյոք, թե մենք չպետք ե անցնենք ավելի բարձրորակ սարքավորման, ավելի բարձրորակ խողովակների : Իհարկե, վո՞չ՝ Մենք պետք ե անցնենք և կանցնենք: Բայց քանի դեռ մենք ընթանալու յենք 200 մետր արագությամբ, քանի դեռ մենք չկիտենք ինչպես հարկն ե փորել, չենք հասել նույնիսկ ամսական հինգ հարյուր մետր արագությամբ, ապա չորս արագություն ունեցող ամբարձիչներ մեղ պետք չեն, ինչպես ասում եր ինձ Ազնեվիթի պետի տեղակալ ընկ . Բորցը: Նա ասում եր. «Յեթե այժմ մեղ տաք և արագություն ունեցող ամբարձիչներ, ապա քանի վոր մենք չկիտենք ինչպես հարկն ե փորել, մենք ասիպիշած կլինենք փոխադրել դրանք յերկու արագության» :

Իմ բերած որինակները վկայում են, վոր կարելի յե ավելի լավ փորել, վոր մենք սպարտավոր ենք ավելի լավ փորել նաև այն սարքավորմար, վոր ունենք այժմ :

Ի՞նչ վիճակի մեջ ե շահագործումը: Նույնակա լավ չե: Վերցնենք որինակ կոմպրեսորները: Մեր նաև վարդապետները շատ

լավ գիտեն, թե ինչպիսի հսկայական նշանակություն ունեն դրանք նաևթարդյունաբերության համար: Յերբ պետք ե կոմպրեսորները ստանալ, նրանք կոկորդով մեկ աղաղակում են՝ «ավելի շատ տուր, ավելի շատ կոմպրեսոր տուր»: Ստացաք, պետք ե իննամեք դրանք ինչպես հարկն ե: Իսկ ի՞նչ կա իրականում: Դուք մտնում եք կոմպրեսորների բաժինը: Կոմպրեսորները պըտըություն են, աշխատում: Բայց յեթե դուք ցանկացաք տեղեկանալ, թե վորքան ոդ և մղում կոմպրեսորը, վորքան ոդ ե տալիս այդ կոմպրեսորը նաևթահորին, չեք կարող իմանալ, վորովհետեւ վոչ վոք վոչինչ չփիտե: Յերբ յես հարց տվի կոմպրեսորի բաժնի պետին, նա հայտարարեց, թե չգիտեալ պատճառով, վոր չափող գործիքներ չկան: Յերեակայեցեք՝ մենք չափող գործիքներ ենք արտադրում, մենք արտասահմանից գործիքներ ենք բերել տալիս, հարյուրավոր միլիոն ուռելու սարքավորմանք ներմուծել, և վոչ վոքի խելքը չի հասել պահանջել այդ գործիքները:

Յես հարց տվի Ամերիկայում յեղած մի շատ ինժեների, — ինչպես բոլորն եւ ոխում են, ըստունակ ինժեների, — Ազեղբեկովի անվան (Կալա) նաևթահանքի պետ ընկ. կուլմինին՝ արդյո՞ք Ամերիկայում ել նավ-

թահանքի շուրջը և նավթահանքում նո՞ւն...
պես կեղտոտ ե, ինչպես մեղ մոտ : Վոչ,
այսուեղ նավթը խողովակներով ե հոսում, —
պատասխանեց նա, — նավթի ճահիճներ չես
տեսնի : Նա պատմեց Տի բնորոշ դեպք : Յերբ
նա ցանկություն ե ունեցել բաց անել ծո-
րակը, տեսնել նավթը, խկույն վրա յեն
վաղել, կանգնեցրել են, բաժակ են բերել և
ասել՝ խնդրեմ նավթը բաժակով վեցրեք:
Յես ընկ. Կուզմինին հարց տվի՝ չարժե՞
արդյոք, վոր մենք ել վերցնենք այդ սովո-
րությունները ամերիկացիներից և նույնպես
կուլտուրական յեղանակով վարենք գործը:
Նրա կողմից առարկություն չեղավ, սա-
կայն մեր նավթագործները շատ են վարժ-
վել կեղտին, և ամենավատն այն ե, վոր
նրանք խորապես համոզված են, թե այլ
կերպ, իբրև թե, չպետք ել լինի և չի կա-
րող լինել: Մինչեռ կեղտի և անկուլտու-
րականության դեմ պետք ել վճռական պայ-
քար մղել :

Մենք հաճախ ականատես ենք լինում,
թե ինչպես մեծ դերետ ունեցող նավթահո-
րը գործարկիլու 2-րդ կամ 3-րդ որը
դրով ել լցվում : Մեզ մոտ լինում են հոկա-
յական քանակությամբ ավարիաներ, վո-
րոնց հաճախ ուղեկցում են Հրդեհները —

այդ բոլորն արդյանք են չահագործման
ասիական մեթոդների :

Մենք Բագվի բոլոր նավթահանքերում
ունենք յերիտասարդ հրամանատարական
կազմ՝ ինժեներներ, Բորցը, Պետերսոնը,
Նիկիտինը, Կուզմինը, Տեր-Ղազարյանը,
Պետրոսյանը, Մախնովը և հարյուրավոր
այլ ինժեներներ : Դա այն յերիտասարդու-
թյունն է, վոր այժմ պայքար ե մղում մեր
արդյունաբերության համար, առաջ ե մը-
ղում այն, հանդիսանում ե նրա քեղաձիգ-
ները : Դրանք ընդունակ ինժեներներ են:
Նրանց տնտեսական փորձը քիչ ե, բայց յես
ամենայն չեմ տարակուսում, վոր նրանցից
լավ ինժեներներ դուրս կդան, լավ տնտե-
սալարներ, լավ աշխատողներ, յեթե նը-
րանք հրամարվեն մի վատ տովությու-
նից, վորն առայժմ շատ ուժեղ ե նրանց
մոտ : Նրանք իտրապես համոզված են, թե
տառացի ամեն ինչ գիտեն : Ինքնաքննադա-
տություն չեն սիրում, և յերբ ակադեմի-
կոս Գուրկինը նավթագործական ժուրնա-
լում զետեղեց բավական քննադատական,
բայց ճիշտ հողված, նրանք վիրավորվե-
ցին : Խոկ իմ կարծիքով, նրանք պետք ե
սովորեն սեփական տախաներից : Մենք մեր
կադրերին դաստիարակել ենք և դաստիա-
րակում ենք վոչ թե ջերմոցային պայման-

ներում, այլ բոլցեկվան ինքնաքննադատում
թյան կրակում: Եթե ընկ. բազվեցիները և
մյուս բոլոր նավթագործները հրաժարվեն
այն կեղծ պատկերացումից, թե նրանք մենա-
շընորհ են նավթի բոլոր գործերի գիտու-
թյան մեջ, այլ սովորեն ու սովորեն, նը-
նրանք կարող են ապահովել նավթի այն
հանույթը, նավթարդյունաբերության այն
ծավալումը, վորը հարկավոր ե մեղ: (Ծա-
փեր):

Նույնպիսի յերիտասարդ ինժեներներ են
դեկալարում գործը նաև Գրողնեվթում,
վորն այժմ գտնիլում ե բավականին վողբա-
րի վիճակում: Ընկ. Ռոգենոյերը Գրողնեվ-
թում, ընկ. Բորչչեվսկին «Մայնեվթում»
նույն սերնդից են: Բորչչեվսկին յեռանդուն
և մեծ թափով աշխատող մարդ է: Յերբ
յս նրան հարցըրի, թե ինչո՞ւ մենք կրիայի
քայլերով ենք փորում, ինչո՞ւ չի կարելի
փորել այլ կերպ, նա ևս կրկնեց ինձ մի
քանի բան «ամերիկան հեքիաթներից», իսկ
հետո, յերբ նա լծվեց գործի, կազմակեր-
պեց աշխատանքն ինչպես հարկն է, հա-
սավ այն արդյունքներին, վորոնց մասին
յս զեկուցեցի: 1934 թվականին «Մայնեվ-
թը» գերակատարեց պլանը: Նրան հաջող-
վեց 1260 մետր խորություն ունեցող նավ-
թահորը փորել 38 որում, համելով ամսա-

կան համարյա 1000 մ. արագության: Այժմ
մեր խնդիրն ե՝ այդ լավ արդյունքը տարա-
ծել բոլոր փորվող հորերի վրա: Նույնպես
յեռանդով և աշխատում թողենոյերը նոր
նավթային շրջանում՝ Մալդոբեկում:

Բազմի նավթագործների հաղթանակի
համար հսկայական ջանք գործադրեց ամ-
բողջ Անդրկովկասի կուսակցական կազմա-
կերպությունը: Ռայկոմների քարտուղար-
ների հիանալի կադրերը ընկերներ Ակոպո-
վը, Նարիմանովը, Ախունզադեն, Բանդա-
րենկոն, Գուրեկչը և մյուսները — նավթի
առաջավոր մարտիկներն են յեղել և են:

Մեծ ջանք ե գործադրել Աղբբեջանի Կո-
մունիստական Կուսակցության կենտրոնի
քարտուղար ընկ. Բաղիբովը: Բազմի նավ-
թագործների հաղթանակի համար հսկայա-
կան ջանք ու յեռանդ ե գործադրել Անդր-
կովկասի Յերկրային Կոմիտեյի քարտու-
ղար ընկ. Բերիան, վորն ամփաներով ու
շաբաթներով ինքն անց ե կացրել Բազ-
վում, ուսումնասիրել ե ամեն մի ույյոն,
ամեն մի փորվող նավթահորը: (Ծափեր):

Մեր հետագա խնդիրն այն է, վոր մենք
պետք ե մեծ չափով և արագորեն բարձ-
րացնենք փորման արագությունը: Փորման
այն արագությունը, վորը գոյություն ունի
այժմ, մենք հանդուրժել չենք կարող: Մեր

նավթահանքերը վերասարքավորել հարկա-
վոր ե, բայց այսոր այն սարքավորումով,
վոր ունենք մենք, հնարավորություն կա-
կրկնապատկելու և յեռապատկելու փորձան
արագությունը, անհրաժեշտ է միայն, վոր
նավթազործ ընկերները սովորեն աշխատել
ինչպես հարկն է: Յեթե մենք հասնենք
փորձան ավելի մեծ արագության և հրա-
ժարվենք շահագործման ասիական մեթոդ-
ներից՝ հաղթանակն ապահովված է: Այդ-
պիսի բարձունքներ չեն, վոր նվաճել ենք
մենք, նվաճել ենք ավելի ծանրը, կնվա-
ճենք նաև այս բարձունքը:

Տորֆն գգալի գեր ե խաղում մեր վառե-
լանյութային բարձրասում: 1930 թվականին
միութենական ձեռնարկությունների գծով
արդյունահանել ենք 4 միլիոն 900·000 տոնն
տորֆ: Անցյալ տարի մենք արդյունահանե-
ցինք 11 միլիոն 700·000 տոնն: Մեքնա-
յացված հանույթի մասը հասալ 65 տոկո-
սի: Տորֆը և թերթաքարն ունեն այն հրա-
կայական նշանակությունը, վոր նրանք մեզ
ազատում են բերովի ածուխից: Վորքան ել
դժվար լինի տորֆ հանել, վորքան ել անա-
խորժ լինի այդ աշխատանքը, այնուամե-
նախիլ, հարկավոր ե գարգացնել այդ գոր-
ծը: Աֆհարաժեշտ է միայն, ինչպես հարկն
ե, մեքնայացնել այդ գործը: Պետք ե նպա-

շատ արագորեն զարգացնենք Գդովի թեր-
թաքարերը, վորպեսզի ազատենք յեր-
կիրը լենինգրադի համար հսկայական քա-
նակությամբ վառելանյութ փոխադրելուց:

ՍԵՎ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱՆ

Անցնում եմ սկ մետալուրգիային: Ամե-
նազժվարին, ամենաբարդ խնդիրը մեզ հա-
մար սկ մետալուրգիայի զարգացումն եր:
Առանց մետալի խոսք անգամ չեր կարող
լինել վոչ մի ինդուստրացման ու յերկրի
անտեսության վերակառուցման մասին:

Նախապատերազմյան մետալուրգիան
տալիս եր 4·200·000 տոնն չուգուն, 4·200
հազար տոնն պողպատ, 3·500·000 տոնն
պրոկատ: 1930 թվականին մենք ունեինք
5·000·000 տոնն չուգուն, 5·863·000 տոնն
պողպատ, 4·813·000 տոնն պրոկատ, այդ
թվում տեսակավոր պրոկատ՝ 242·000 տ.:
Իսկ յերկրի պահանջը հսկայական եր: Ֆեր-
րո-ձուլվածքներ մենք այն ժամանակ հա-
մարյա թե չեյինք արտադրում, իսկ ա-
ռանց վրանց տեսակավոր պրոկատ չի կա-
րելի ստանալ: Կուսակցության ու կառավա-
րության առաջ խնդիր եր կանխած՝ ուժե-
ղացրած տեմպով առաջ տանել նոր, հսկա-

յական մետալուրգիական գործարանների շինարարությունը: Մենք հսկայական շափերով ծալվալեցինք նոր գործարանների կառուցումն ու հների վերակառուցումը: Սկսեցինք կառուցել կուզնեցկը և Մագնիտոգորսկը, Զապարոժստալը, Ազովստալը, Տուլայի, Լիպեցկի, Կրիվոյ-Ռոգի, Տադիլի գործարանները, ձեռնարկեցինք Զերժինսկու անլան, Մակեյևկայի, Վորոչիլովի անվան գործարանների, «Կրասնի Ուկայաբր», «Ելեկտրոստալ» և Զլատոստատովի գործարանների վերակառուցմանը, առաջին Ռուսլի, Նիկոպոլի, Մարյուպոլի, Տագանրոգի, Կարլ Լիբկնեխտի, Սինարի, Լիպեցկի, Վիկունսկի, Մակեյևկայի և այլ խողովակագործարանների կառուցմանը:

Հազիվ թե յերբեմցե վորեե յերկեր միաժամանակ այլքչափ. մետալուրգիական դորժարաններ կառուցած լինի:

Դուք գիտեք, թե ինչպիսի հսկայական աշխատանք ու միջոցներ ե պահանջում մետալուրգիական գործարանների կառուցումը: Այսուեղ բանը միայն այն չե, վոր գոմնայի, մարտենյան ու պրոկատային ցեխեր բարձրացնենք, այլ բանն այն ե, վոր շարժման մեջ դնենք այդ ամենը, իսկ դրա հա-

մար հսկայական աշխատանք ե պահանջվում հանքաքարի, Փլյուսի, հրակայուն նյութերի, կռքսի, ելեկտրոներդիայի, տրանսպորտի, վերամուրովման ոժանդակ ձեռնարկությունների գծով: Բավական ե միայն մատնանշել, վոր մեկ տոնն մետաղ ստանալու համար պահանջվում ե վերամշակել հինգ տոնն հումք: Մագնիտկայի բեռնաշրջանառությունը համարյա հավասար ե ամբողջ Հարավ-Ուրալյան յերկաթուղու բեռնաշրջանառությանը, վորն սպասարկում ե նրան: Մագնիտկայի ու Կուզնեցկի ջրմուղները, առանձին-առանձին վերցրած, ավելի խոշոր են Լենինյանքաղի ջրմուղից: Մագնիտկայի՝ դեռ մի քանի տարի առաջ մերկ դաշտում այժմ բարձրացել են խոշորագույն դորժարան և 220.000 բնակչություն ունեցող քաղաք: Իսկ Սիբիրում աճել ե Կուզնեցկի գործարանը՝ 170 հազար բնակիչ ունեցող քաղաքով:

Մրանից կարելի յե տեսնել, թե ինչպիսի հսկայական միջոցներ եր հարկավոր ներդնել մետալուրգիայի մեջ՝ այն վորքի կանխեցնելու համար: Լենինյան կուսակցությունը դժվարությունների առաջ կանգչի առնում: Նա այս չորս տարիների ընթացքում սե մետալուրգիայի մեջ ներդրել

Ե 5.306 միլիոն ռուբլի։ Այս չորս առարկա ընթացքում մենք շահագործման ենք հանձնել 24 նոր դոմնային վառարան, դըրանցից 13 վառարանը՝ 800-ից մինչև 1000 խորանարդ մետր տարողությամբ, 6-ը՝ 1000 խորանարդ մետրից ավելի տարողությամբ։ Ավելացրել ենք դոմնային վառարանների ընդհանուր ծավալը, 1930 թվականի 27 հազար խոր. մետրից հասցնելով 49.000 խոր. մետրի. — աճը՝ 81 տոկոսով։ Շահագործման ենք հանձնել 80 մարտենյան նոր վառարան՝ 3000 քառակուսի մետր հաստակով. վառարանների հատակի տարածությունն ավելացրել ենք 48 տոկոսով։ Շահագործման են հանձնվել ու վերականգնվել են 35 պրոկատային դադյան։ Բլումինդներ՝ 5.150.000 տոնն կարողությամբ, պատրաստող դադյահներ՝ 1.095.000 տոնն կարողությամբ, հարթարող դադյահներ՝ 1.055.000 տոնն կարողությամբ, այդ թվում 5 հզոր բլումինդներ, վորոնց նմանը մեր յերկրում առաջ չկար։ Խոզովակներ պատրաստող նոր դադյահներ շահագործման են հանձնված 10 համ՝ 232.000 տոնն կարողությամբ, մինչդեռ 1930 թվականին յերկաթյա խոզովակների վողջ արտադրությունը 264.000 տոննի յեր հասնում։ Կոքսի վառարաններ շահագործման են հանձ-

նված 1493 համ՝ 8.1 միլիոն ռ. կոքսի կարողությամբ, այն ժամանակ, յերբ կոքսի վողջ այրումը 1930 թվականին վեց միլիոն տոնն եր։ Կրաքարի նոր հանքերի կարողությունը 7.400.000 տոնն է։ Կրաքարի փաստացի հանույթը 1930 թվականին 1.679.000 տոնն էր, իսկ 1934 թվականին հասել է 7.000.000 տոննի։ Դոլոմիտի նոր քարհանքներ — 689 հազար տոնն, ըստ վորում նրա հանույթը 1930 թվականին յեղել է 146.000 տոնն, իսկ 1934 թվականին՝ 638.000 տոնն։

Հրակայուն նյութերի արդյունաբերության գծով նոր գործարանների խոշոր շինարարություն է կատարված, ընդարձակված են հին գործարանները, մեքենայացված են քարհանքները։ Հրակայուն նյութերի արդյունաբերության կարողությունը առ մեկն հունվարի 1931 թվականի 1.227.000 տոննից առ մեկն հունվարի 35 թվականի հասել է 2.451.000 տոննի։

Եեթե դեռ 1931 թվականին մենք արտասահմանից ներմուծում ենինք 268 հազար տոնն հրակայուն նյութեր, ապա ներկայումս այդ մասին խոսք անդամ լինել չի կարող։ Եեթե 1930 թվականին հրակայուն կավերի ու Փլյուսների քարհանքներում ամ-

բողջ աշխատանքը ձեռքով եր կտարկված, ապա ներկայումս մենք այդ քարհանքներում ունենք 48 մոտոքարշներ (1930 թվականին և վոչ մեկը չունելինք), 48 եքսկավատորներ (ունելինք 8-ը), 80 նեղ դժի ու լայն դժի շողեքարշներ (կար 16) :

Հանքաքար 1930 թվականին հանված է 21.700.000 տոնն՝ 1930 թվականի 10.600 հազար տոննի փոխարեն; Աճումը 4 տարվա ընթացքում ալիքի քան յերկու անգամ: Այդ տարիների ընթացքում շահագործման հանձնված բոլոր նոր հանքահորերի ու շախտաների արդյունահանման ընդհանուր կարողությունը տարեկան 15.000.000 տոննից ավելի յէ: Բացի Կրիվոյ-Ռոգից, վրուտեղ այս չորս տարվա ընթացքում շահագործման են հանձնված 8.200.000 տոնն կարողությամբ նոր հանքահորեր, վորը կրկնապատկեց նրա կարողությունը 1930 թվի համեմատությամբ, յերկաթահանքի նոր շրջաններ են հայտարերված-մշակված Մագնիսոդորսկում, վորոնյ ձեռնարկությունների կարողությունը հասնում է 5.000.000 տոնն հանքաքարի, մշակվում ե Խալիլով յերկաթահանքի շրջանը — Տելլերը և յերկաթուղի յէ անցկացվում դեպի Լեռնային նորի նոր հանքավայրերը:

Ինչպես ածխի ասպարիֆում, արդյունաբերության այս ճյուղում ևս հաղթանակն ամբողջովին հիմնվում է բոլոր աշխատանքների լայն մեքենայացման վրա: Այսպես որինակ՝ Կրիվոյ-Ռոգում մենք ունենք 624 սկրեպերային ամբարձիչներ՝ 1930 թվականի 90-ի փոխարեն, ելեկտրոքարշեր՝ 33 հատ՝ 1930 թվականին չե յեղել և վոչ մեկը:

Աև մետալուրգիան ունի 1778 չողեքարշ, 21.900 վագոն և 6500 կերամետր յերկաթուղարիծ:

Այսուր մենք ունենք հզոր մետալուրգիա և այդ մետալուրգիային սպասարկող վոչ վատ կադրեր: 1934 թվականին մետալուրգները գերակատարեցին չուդունի ու պրոկատի պլանը, իսկ պողպատի գծով թերակատարեցին մոտ 250.000 տոննով: Պլանի գերակատարումն ապահովված է հանքաքարի, կոքսի, Փլյուսների, հրակայուն նյութեր արտադրող գործարանների, նաև գործարանային տրանսպորտի գծով կատարվող լավաշխատանքով:

Չուդունի ասպարիֆում մենք առաջին տեղը գրավեցինք Յելլոպայյում՝ տալով 10.440.000 տոնն չուդուն: Աճում մեկ տարվա ընթացքում 3.332.000 տոննով, վորպի-

սին չի տվել և վոչ մի յերկիր : (Ծափեր) :
1930 թվականի համեմատությամբ այդ
կազմում ե 208 տոկոս :

Պողպատ մենք տվել ենք 9.565.000
տոնն՝ 1930 թվականի համեմատությամբ
163 տոկոս : Ֆերրոձուլվածքներ տվել ենք
67.000 տոնն՝ 1930 թվականի 800 տոննի
փոխարեն . ելեկարոպողպատներ 287.000
տոնն՝ 1930 թվականի 42.000 տոննի փո-
խարեն :

Գրոկատ արտադրել ենք 7.034.000 տոնն՝
1930 թվականի համեմատությամբ 146 տո-
կոս , այդ թվում տեսակավոր պրոկատ մեկ
միլիոն 249.000 տոնն՝ 1930 թվականի 242
հազար տոննի փոխարեն : Աճում հինգ ան-
գամ : Յերկաթյա խողովակներ՝ 469.600
տոնն՝ 1930 թվականի 264.000 տոննի փո-
խարեն — 1930 թվականի համեմատությամբ
177.7 տոկոս : Յերկաթուղային ռելեր՝
786.000 տոնն՝ 1930 թվականի 401.000
տոննի փոխարեն :

Յեթե համեմատելու լինենք , ընկերներ ,
չուգումի ձուլումը մյուս յերկիրների հետ՝
հետեւալ պատկերը կստացվի — մենք ու-
նինք 10.400.000 տոնն , Գերմանիան 1934
թվականին ուներ 8.720.000 տոնն , Ֆրան-
ուսան՝ 6.180.000 տոնն , Բրիտանիան՝ 6.000

հազար տոնն , Բելգիան՝ 2.900.000 տոնն :
Զեխո-Սլովակիան՝ 610.000 տոնն , Լեհաս-
տանը՝ 380.000 տոնն , Բաւարիան՝ 580.000
տոնն , Շվեդիան՝ 550.000 տոնն , Ավստ-
րիան՝ 140.000 տոնն , Ամերիկան՝ 16.500
հազար տոնն , Ճապոնիան՝ 2.300.000 տոնն
չուգում :

Յերեկ ընկ . Ռողենդոլյը ձեզ արդեն հա-
զորդեց այն մասին , վոր մենք վոչ միայն
չենք մտածում չուգումի վոչ մի ներմուծ-
ման մասին , այլև մենք մոտ 100.000 տոնն
չուգում ենք վաճառել Ճապոնիային և յեթե
հարկ լինի , կարող ենք վաճառել շատ ա-
վելի :

Կարծեք թե վատ հաղթանակներ չեն ,
ընկեր մետաղուրդներ : Մետաղուրդներն
իրենց զգում են վորպես անվանակոչիկներ :
Գտնում են , վոր նրանք հաղթել են , հա-
մաշխարհային ռեկորդ են սահմանել չու-
գումի ասպարիզում , տվել են 3.332.000
տոնն աճ : Աշխարհում վոչ մի տեղ այդպի-
սի բան չկա : Լավ բան ե , չեմ առարկում ,
ձեզ հետ միասին հրճվում եմ , ընկեր մե-
տաղուրդներ , հրճվում ենք բոլորս , հըրճ-
վում ե ամբողջ յերկիրը : (Ծափեր) :

Յեր կուսակցությունն ու կառավարու-
թյունը շատ ուժեր ու միջոցներ են ներդրել ,

մինչև վոր առաջանք այդ արդյունքները :
Սակայն կարող ենք մենք արդյոք հանդստանալ դրա վրա :

Բիրման (Պետրովակու անվան մետարդպիտական գործարանի դիրեկտոր) —
Վո՞չ :

Որզնիկիձե — Ընկ . Բիրմանը պատասխանում է , թե չենք կարող , յետ համաձայն եմ ընկ . Բիրմանի հետ : Յեթե մենք վերցնենք դոմնային արտադրությունը , ապա անկասկած այս տարի լավ գործակիցներ ստենք անցյալ տարվա հեմամտությամբ : 1933 թվականին մենք ավել ենք դոմնային գառարանների ծավալի ոգտագործման 1,69 գործակից , իսկ 1934 թվականին — 1,31 : Այդ լավ է : Բայց բավակա՞ն ե այդ : Ամենենին վոչ : Յեկ վոր այդ բավական չե՝ ապացուցում են մետարդպներն իրենք : Կուզնեցկի գործարանը 1934 թվականին տվել ե գործակից 1,14 , ընկ . Կիրովի անվան Մակեյեվկայի գործարանը՝ 1,14 , Ստալինսկի գործարանը՝ 1,17 : Կուսակցության համագումարից հետո նա դժափորեն բարելավել ե իր աշխատանքը : Կրիվոյ-Ռոգի գործարանը՝ 1,18 , Ազովստալը՝ 1,21 , Մագնիսոգորսկի Ստալինի անվան գործարանը՝ 1,23 , Պետրովակու ան-

վան գործարանը՝ 1,24 : Այլևս կարիք չկա շարունակել :

Խատայեվիչ — Հին թվեր են :
Որզնիկիձե — Վո՞չ , ընկ . Խատայեվիչ , ինձ մոտ բացարձակապես նոր թվեր են , կարող եք համոզվել դրանում :

Խատայեվիչ — Համեմատել Կուզնեցկի հետ չի կարելի :

Որզնիկիձե — Լավ , ընկ . Խատայեվիչ , համաձայն եմ : Կուզնեցկի հետ համեմատել չի կարելի : Դա մեքենայացված գործարան է , յետ գտնում եմ , վոր Կուզնեցկի գործարանը պետք ե շատ ավելի լավ աշխատի , քան աշխատում է : Նա չի կարող կանգնել 1,14 գործակիցի վրա , այլ պետք ե տա 1,0 գործակից : Իսկ Պետրովակու անվան գործարանը չի կարող կանգնել 1,24-ի վրա , չնայած վոր 1934 թվականին նա ուղղել է 1,54 : Նա պետք ե ե'լ ավելի բարեկամի իր աշխատանքը :

Բիրման — Դեկտեմբերինը 1,15 եր :

Որզնիկիձե — Դեկտեմբերինը 1,15 : Դե , ընկ . Բիրման , ձեր խոսքերով բռնում եմ ձեզ , տվե՞ք 1,15 գործակից : (Մաֆեր) :

Յեկ յեթե ընկ . Բիրման , տաք մեղ 1,15 տարեկան գործակից ...

Բիրման — Կուսակ:

Որջոնիկիձեն — ... Յել յեթե բոլոր
դործարանները ձեզ հետ միասին տան 1,15
դործակից, մենք այն դոմնային վառարան-
ների միջոցով, վոր այսոր ունենք, որական
կտանք վո՞չ թե 31, վո՞չ թե 32, այլ մոտ
40 հազար տոնն չուգուն։ Յեկեք այստեղ,
համագումարում, իշխանության բարձրա-
գույն մարմնի առաջ, կնքենք այդ պայմա-
նագիրը։ (Ծափեր) :

Վորոշիլով — Բիրմանը բոնվեց։ (Ծի-
ծաղ, ծափեր) :

Որջոնիկիձեն — Համագումարում տըր-
ված խոսքը, ընկ. Բիրման, պետք ե կա-
տարվի ինչ գնով ել թեկուղ լինի։ (Ծա-
փեր) :

Դուք հիշուք եք, ընկերնե՛ր, յերբ մե-
տալուրգները հաղթական ռապորտով ներ-
կայացան ընկ. ընկ. Ստալինին և Մոլոտո-
վին։ Ընկ. Ստալինը գովարանելով դոմնա-
ների վրա աշխատող մետալուրգներին,
մարտնանշեց պողպատի ու պրոկատի յետ
մնալլ, իսկ դա՝ հիմնականն ե։ Յերբեմն
ասում են, թե իբր մեր յերկիրը բավակա-
նաչափ հագեցված չե մետաղով և դրա հա-
մար ել մեզ մոտ յետ ուղարկվող յերկաթի
ջարդ քիչ ունենք։ Այսա, մեղանում բավա-
րար քանակությամբ մեծածավալ մարտե-

նյան վառարաններ չկան։ Իսկ յերբ յես
նայում եմ, թե ի՞նչ ե կատարվում մեր
դործարաններում, յես պետք ե ասեմ, վոր
այդ ամենը ճիշտ չե։ Ճիշտ չե, վոր մեր
յերկրում յերկաթի ջարդ քիչ կա։ Իհարկե,
մենք այնքան յերկաթի ջարդ չունենք, ինչ-
քան, որինակ, կա Գերմանիայում, կամ Ամե-
րիկայում։ Իհարկե, այլպիսի քանակու-
թյամբ չունենք, սակայն այն յերկաթի
ջարդը, վոր կա մեր յերկրում, մենք բա-
վարար չափով չենք հավաքում։ (Չայներ—
Ճիշտ ե)։ Սիալ ե, իհարկե, նաև այն, վոր
մեղ մոտ պակասում են մարտենյան, վառա-
րանները։ Ճիշտ ե միայն, ընկ. Բիրման,
այն, վոր գեռես մենք չատ վատ ենք աշ-
խատում մարտենների վրա։ Լավ ենք աշ-
խատում, իհարկե, քան անցյալ տարինե-
րին, կա անշուշտ դգալի առաջինադաշտում,
սակայն այդ անբավարար ե։

Մենք յուրաքանչյուր քառակուսի մետր
հնոցահատակից ստանում ենք 3,4 տոնն.
այդ բանի նման չե։ Փորձեցեք բարելավել
աշխատանքը, հավասարվեք լավագույն վա-
ռարաններին ու ցեխերին և դուք հսկայա-
կան աճում կստանաք։ Զերժինսկու անվան
դործարանում յուրաքանչյուր քառ։ մետր

Որջոնիկիձե — ... Յեկլ յեթե բոլոր
դործարանները ձեզ հետ միասին տան 1,15
դործակից, մենք այն դոմնային վառարան-
ների միջոցով, վոր այսոր ունենք, որական
կտանք վո'չ թե 31, վո'չ թե 32, այլ մոտ
40 հազար տոնն չուգուն։ Յեկեք այստեղ,
համագումարում, իշխանության բարձրա-
գույն մարմնի առաջ, կնքենք այդ պայմա-
նագիրը։ (Ծափեր) :

Վորոշիլով — Բիրմանը բոնվեց։ (Ծի-
ծաղ, ծափեր) :

Որջոնիկիձե — Համագումարում տըր-
ված խոսքը, ընկ. Բիրման, պետք ե կա-
տարվի ինչ գնով ել թեկուզ լինի։ (Ծա-
փեր) :

Դուք հիշուք եք, ընկերնե՛ր, յերբ մե-
տարուրդները հաղթական ուսպորտով ներ-
կայացան ընկ. ընկ. Ստալինին և Մոլոտո-
վին։ Ընկ. Ստալինը գովարանելով դոմնա-
ների վրա աշխատող մետալուրգներին,
մատնանշեց պողպատի ու պրոկատի յետ
մնալը, իսկ դա՝ հիմնականն ե։ Յերբեմն
ասում են, թե իբր մեր յերկիրը բավակա-
նաշափ հագեցված չե մետաղով և դրա հա-
մար ել մեզ մոտ յետ ուղարկվող յերկաթի
ջարդ քիչ ունենք։ Ապա, մեղանում բավա-
րար քանակությամբ մեծածավալ մարտե-

նյան վառարաններ չկամ։ Իսկ յերբ յես
նայում եմ, թե ի՞նչ ե կատարվում մեր
դործարաններում, յես պետք ե ասեմ, վոր
այդ ամենը ճիշտ չե։ Ճիշտ չե, վոր մեր
յերկրում յերկաթի ջարդ քիչ կա։ Իհարկե,
մենք այնքան յերկաթի ջարդ չունենք, ինչ-
քան, որինակ կա Գերմանիայում, կամ Ամե-
րիկայում։ Իհարկե, այդպիսի քանակու-
թյամբ չունենք, սակայն այն յերկաթի
ջարդը, վոր կա մեր յերկրում, մենք բա-
վարար չափով չենք հավաքում։ (Չայներ—
Ճիշտ ե)։ Սիալ ե, իհարկե, նաև այն, վոր
մեզ մոտ պակասում են մարտենյան, վառա-
րանները։ Ճիշտ ե միայն, ընկ. Բիրման,
այն, վոր զենևս մենք շատ վատ ենք աշ-
խատում մարտենների վրա։ Լավ ենք աշ-
խատում, իհարկե, քան անցյալ տարինե-
րին, կա անշուշտ զգալի առաջնաղացում,
սակայն այդ անբավարար ե։

Մենք յուրաքանչյուր քառակուսի մետք
հնոցահատակից ստանում ենք 3,4 տոնն.
այդ բանի նման չե։ Փորձեցեք բարեկավել
աշխատանքը, հավասարվեք լավագույն վա-
ռարաններին ու ցեխերին և դուք հսկայա-
կան ածում կտանաք։ Զերժինսկու անվան
դործարանում յուրաքանչյուր քառ։ մետք

Հնացահատակից մենք ստանում ենք հինգ
տոնն պղպատ. վերջին ժամանակներս
նույնքան և ստանում ընկ. Գուլբովչելկովը
նաև Մակեյեվկայի Կիրովի անվան գործա-
րանի նոր ցեխում և ընկ. Ստեպանովը
«Սերպ ի Մոլոտ» գործարանում և Տրեյ-
դուրը «Կրասնի Ոկտյաբր» գործարանում.
Ղալ ցուցանիշներ ունենք առանձին վառա-
րաններում ընկ. Բիրմանի մոտ, ընկ. Զա-
վենյադինի մոտ՝ Մազնիտկայում, ընկ. Բուտենկոյի մոտ՝ Կուզնեցկում, սակայն
բավկան չե բարձր ցուցանիշներ տալ ա-
ռանձին վառարաններում, պետք ե
լավ աշխատանք կատարել բոլոր վառարան-
ներում և այն ժամանակ մենք հսկայական
աճ կունենանք: Այստեղ ոեգերվները շատ
ավելի յեն, քան դամնային արտադրության
մեջ: Դոմնային արտադրության մեջ մեր
մետալուրգներն զգալիորեն ավելի առաջ
դնացին, քան մարտենների գծով:

Նույնը նաև պրոկատի գծով: Մեր պըո-
կատային դադյահները մինչև այժմ բավա-
կանին թույլ են ոգուագործվում: Ավարիա-
ները, պարապուրդները մեր պրոկատային
դադյահների չարիքն են: Սովորեցեք նը-
րանց վրա աշխատել ինչպես հարկն ե,
այն ժամանակ 1935 թվականի ծրագիրը

վոչ միայն կկատարվի, այլև կգերակա-
տարվի: Մետալուրգիայի ծրագիրը, վորը
տվել ե մեզ կառավարությունը 1935 թվա-
կանի համար, ամենաին ավելի լարված չե,
քան 1934 թվականի ծրագիրը: Այս բանի
հետ ընկեր մետալուրգները պետք ե համա-
ձայնվեն: Իսկ յեթե նրանք համաձայնվում
են դրա հետ ովտիներն են շարժում
ի նշան համաձայնության, ապա նրանք
1935 թվականին պետք ե գերակատարեն
ծրագիրն ամբողջ մետալուրգիայի գծով՝
ինչպես չուդունի, այնպես ել պղպատի ու
պրոկատի գծով: Հնարավորություններ այդ
բանի համար նրանք ունեն: (Ծափեր: Զայ-
ներ — «Կկատարենք»):

Մենք այստեղ խոսեցինք այն մասին,
վոր գերակատարել ենք 1934 թվականի ծր-
ագիրը և առաջին տեղն ենք գրավել Ենի-
րոպայում: Սակայն Ամերիկայի Միացյալ
Նահանգներից մենք գեռնս հեռու յենք:
Դոմնային վառարանների կարողությունը
ԱՄՆ-ում կազմում է 45 միլիոն տոնն, պող-
պատաձուլական ցեխերի կարողությունը 67
միլիոն տոնն:

Վաղեմիմեր Խմելը խնդիր դրեց հասնել
ու անցնել կապիտալիստական առաջավոր

յերկերներին։ Սակայն մենք կարող ենք առանց վորեւ գոռոզացման ու չափազանցման հաստատապես հայտարարել մեր Միության խորհուրդների համագումարին, վորյեթե հինգ միլիոն տոնն չուզումից տաս և կես միլիոն տոնն չուզումից համելու համար մեղ անհրաժեշտ յեղավ չորս տարի ժամանակ, ապա տաս միլիոն տոննից մոտ 20—21 միլիոն տոննի համելու համար մեղ անհրաժեշտ կլինի համենայն դեպս վոչ ավելի քան չորս տարի։ (Բուռն ծափեր)։

ԳՈՒՆԱՎՈՐ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱՆ

Հնկերներ, անցնում եմ գունավոր մետալուրգիային։ Գունավոր մետալուրգիայի մեջ մենք այս 4 տարվա ընթացքում ներդրել ենք 2·160 միլ. ռ.։ Գունավոր մետալուրգիայի արտադրանքը 1934 թ.՝ 1930 թվականի համեմատությամբ աճել է 64 տոկոսով։ Չնայած դրան, մենք այնուամենայի գունավոր մետաղների խոշոր պակաս ենք զգում։ Արդյունաբերության այդ հյուրը, բացառությամբ պղնձից՝ քիչ երդարգացած կամ բոլորովին զարգացած չեր։ Բավական ե միայն ասել, վոր 1930 թ-

վականին արտադրված ե յեղել միայն 4400 տոնն ցինկ, ընդլորում ելեկտրոլիտային ցինկ ամենալին չի յեղել։ 1934 թվականին մենք արտադրել ենք 27 հազար տոնն ցինկ, այդ թվում ելեկտրոլիտային՝ 5425 տոնն։

Արձիք՝ 1930 թվականին յեղել և 11 հազար տոնն, 1934 թվականին՝ 27 հազար տոնն։ Ալյումին՝ վո'չ 1930, վո'չ 1931 և վո'չ ել 1932 թվերին մեղանում չի յեղել, իսկ 1934 թվականին մենք մեր նոր կառուցած գործարաններում — Վոլխովի, Դնեպրի գործարաններում — արտադրել ենք 14·400 տոնն ալյումին։ 1935 թվականի պլանը 25 հազար տոնն ե։

Նիկել մեղանում նույնպես չկար և 1934 թվականին առաջին անգամ մեր Ուրալի գործարանը տվեց 863 տոնն նիկել։ Վերջին ժամանակներս նիկելի հանքավայրեր են հայտաբերված Կարելիայում (Մոնչեցունդրա), մենք նիկելի հարուստ հանքեր ունենք Ակտյուրինսկի շրջանում։ Այդ շրջաններում մենք ձեռնամուխ ենք լինում յերկու խոշոր նիկելի գործարանների կառույցման։

Ալյումինի գծով մենք պետք ե ավարտենք Դնեպրի ալյումինի կոմբինատը՝ 45 հազար տոնն կարողությամբ։ 1935 թվա-

կանին մենք 32 միլիոն ռուբլի յենք հաս-
կացնում Ուրալի ալյումինի կոմբինատի
կառուցումն արագացնելու համար։ Ալյու-
մինի ոքսիդի գործարան և կառուցվելու
կանուակալշայում։ Այսպիսով յերկրորդ
հնգամյակի վերջին մենք կունենանք 80.000
տոնն ալյումին, զորը մեղ առաջին տեղը
կդնի Յելբոպայում և յերկրորդ տեղը՝ աշ-
խարհաւմ։

1935 թ. պետք ե արտադրվի ցինկ՝
45.000 տոնն, արձիճ՝ 46.000 տոնն։ 1937
թվականին ցինկի արտադրությունը պետք է
կազմի 90.000 տոնն, արձիճինը՝ 115 հազար
տոնն։

Այս տարի մենք կառուցում ենք մագնի-
ումի յերկու գործարան՝ մեկը Սովիկամ-
սկում, իսկ մյուսը Զապորժիեյում։

Գործող պղնձաձեւական գործարանները
վերջին տարիների ընթացքում չափազանց
վատ ելին աշխատում և միայն անցյալ
տարվա յերկրորդ կեսից ակսեցին բարելա-
վել իրենց աշխատանքը։ 1935 թվականին
այդ գործը կարգավորվելու յել Անցյալ տա-
րի մենք տվել ենք 53.600 տոնն, 1935 թվա-
կանի պլանը՝ 71.000 տոնն ե։ Այս նոր

մարդիկ, վորոնց մենք ուղարկեցինք Ուրալ,
արդեն վորոշակի արդյունքներ են տվել։
Ընկ. Լիտվինովը, վորը լենինդրադից փո-
խադրվեց Կալատինսկի գործարանը, իրեն
ցույց տվեց վորպես հիանալի դիրեկտոր։

Կառուցվում են Մերձալիսայան պղնի-
ձաձուական կոմբինատը՝ հարյուր հազար
տոնն կարողությամբ, Միջին ուրալյան
կոմբինատը 50.000տ. կարողությամբ և Բըլ-
յավին՝ 20.000 տոնն կարողությամբ։ Մոտիկ
ժամանակներում մենք զբաղվելու յենք Ալ-
մալիկի պղնձի հանքավայրերի ուսումնակի-
րությամբ և Ջեղկաղգանով։ Այս շրջանում
մենք հարուստ հանքեր ունենք, սակայն
այդ վայրը չափազանց հեռու յե ընկած-
յերկաթուղուց։

Տեսակավոր պողպատը, միախառն պող-
պատը պահանջում են վոլֆրամի, մոլիբ-
դենի և այլ հազվադյաւոտ մետաղների ար-
տադրությունը։ Այստեղ մենք մինչև այժմ
չատ թե քիչ զգալի հաջողություններ
չունենք, մինչդեռ այդ մետաղները մեր ժո-
ղովրդական տնտեսության մեջ հսկայական
նշանակություն ունեն։ Պետք ե ամենամո-
տիկ տարիների ընթացքում ուժեղացնել
հագվադյուտ մետաղների հանքավայրերի

կանին մենք 32 միլիոն ռուբլի յենք հաս-
կացնում Ռուբլի այսամինի կոմբինատի
կառուցումն արագացնելու համար։ Այս-
մինի ուժիդի գործարան և կառուցվելու
կանդալաշայում։ Այսպիսով յերկրորդ
հնգամյակի վերջին մենք կունենանք 80.000
տոնն ալյումին, վորը մեզ առաջին տեղը
կդնի Յելվոպայում և յերկրորդ տեղը՝ աշ-
խարհում։

1935 թ. պետք ե արտադրվի ցինկ՝
45.000 տոնն, արձիճ՝ 46.000 տոնն։ 1937
թվականին ցինկի արտադրությունը պետք է
կազմի 90.000 տոնն, արձիճինը՝ 115 հազար
տոնն։

Այս տարի մենք կառուցում ենք մագնի-
ուումի յերկու գործարան՝ մեկը Սովիկամ-
ակում, իսկ մյուսը Զապորժիեյում։

Գործող պղնձաձուլական գործարանները
վերջին տարիների ընթացքում չափազանց
վաստ ելին աշխատում և միայն անցյալ
տարվա յերկրորդ կեսից ակսեցին բարելա-
վել իրենց աշխատանքը։ 1935 թվականին
այդ գործը կարգավորվելու յեւ Անցյալ տա-
րի մենք տվել ենք 53.600 տոնն, 1935 թվա-
կանի պլանը՝ 71.000 տոնն ե։ Այն նոր

մարդիկ, վորոնց մենք ուղարկեցինք Ռուբալ,
արդեն վորոշակի արդյունքներ են տվել։
Ենկ. Լիտվինովը, վորը Լենինգրադից փո-
խադրվեց Կալատինսկի գործարանը, իրեն
ցույց տվեց վորպես հիանալի դիրեկտոր։

Կառուցվում են Մերձբալխացյան պղնի-
ձաձուլական կոմբինատը՝ հարյուր հազար
տոնն կարողությամբ, Միջին ուրալյան
կոմբինատը 50.000տ. կարողությամբ և Բըլ-
յալին՝ 20.000 տոնն կարողությամբ։ Մոտիկ
ժամանակներում մենք զբաղվելու յենք Ալ-
մալյիկի պղնձի հանքավայրերի ուսումնասի-
րությամբ և Զեղկաղգանով։ Այս շրջանում
մենք հարուստ հանքեր ունենք, սակայն
այդ վայրը չափազանց հեռու յեւ ընկած
յերկաթուղուց։

Տեսակավոր պողպատը, միախառն պող-
պատը պահանջում են վոլֆրամի, մոլիբ-
դենի և այլ հազվադյաւատ մետաղների ար-
տադրությունը։ Այստեղ մենք մինչև այժմ
շատ թե քիչ զգալի հաջողություններ
չունենք, մինչդեռ այդ մետաղները մեր ժո-
ղովրդական տնտեսության մեջ հսկայական
նշանակություն ունեն։ Պետք է ամենամո-
տիկ տարիների ընթացքում ուժեղացնել
հազվագյուտ մետաղների հանքավայրերի

Հետախուզությունը և հիմք դնել մեղանում
նրանց արտադրությանը :

Վուկու արգյունաբերությունը զարգա-
նում է, այս տարի նաև գերակառարեց իր
պլանը :

ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Քիմիական արդյունաբերությունը խոր-
հուրդների վեցերորդ համագումարի նա-
խորյակին բավականին հյութապակաս եր :
Մենք այն ժամանակ ունեյինք միայն մեկ
ժամանակակից տիպի աղոտային պարարտա-
նյութերի գործարան Գորկու յերկրում՝
Չերնոբյշյում : Այս տարիների ընթացքում
մենք կառուցել ենք ու շահագործման ենք
հանձնել Բերեզնիկի, Ստալինոգորսկի և
Գոռլոցկայի աղոտային պարարտանյութե-
րի գործարանները : Մենք կառուցել ենք
ծծմբաթթվուտային նոր գործարաններ, նը-
րանց կարողությունը 375·000 տոննից հաս-
ցընելով 968·000 տոննի — աճը 1930 թվա-
կանի համեմատությամբ 258 տոկոսով :
1934 թվականին մենք ստացանք 708·000
տոնն ծծմբաթթու՝ 1930 թվականի 356·000
տոննի փոխարեն :

Մենք շահագործման ենք հանձնել Յա-
րոսլավի ուեզմի խոշոր կոմբինատը, կա-
76

ռուցել ու շահագործման ենք հանձնել
Սինթետիկ կառուչուկի յերեք գործարան,
վորոնց յուրացումը 1934 թվականին վատ
չի ընթացել : Մենք 1934 թվականին ստա-
ցանք 11·000 տոնն սինթետիկ կառուչուկ :
Մրանք անկասկած մեր նվաճումներն են :
Հանգուցյալ ակադեմիկոս Լեբեդեվը սինթե-
տիկ կառուչուկի արտադրության մեջողի
հեղինակն է, իսկ յերիտասարդ տնտեսավար-
ներ և ինժեներներ Յարոսլավում՝ Ստրոժը,
Վորոնեժում՝ Կրոլը, Յաֆեևմովում՝ Մատ-
վեյեվը նախկին զինվորական աշխատողներ
են, վորոնք Ոսկապովի, Շմիդտի գլխավորու-
թյամբ, գործարանի հարվածայինների և
հարվածայնուհիների հետ միասին, կարգի
գցեցին այդ գործը : Մենք պետական փորձ-
նական քիմիայի ինստիտուտի մեթոդով
Հայաստանում կառուցում ենք աինթետիկ
կառուչուկ ստանալու գործարան : Զգալիո-
րեն ավելացված ե պլաստիկ մասսայի
արտադրությունը :

Այս տարիների ընթացքում քիմիական
արդյունաբերության մեջ ներդրված ե յե-
րեք միլիարդ ռուբլի, արտադրական ֆոն-
դերը 585 միլիոն ռուբլուց հասցված են
2·300 միլիոն ռուբլու, ընդհանուր արտադ-
րանքն աճել է՝ 968 միլիոն ռուբլու փոխա-

բԵն 1934 թվականին հասնելով 2.372 միլիոն ռուբլու. աճում 1930 թվականի համեմատությամբ՝ 245 տոկոսով:

Արհեստական մետաքսի արտադրությունը 1930 թվականին կազմել է ընդամենը 600 տոնն, իսկ 1934 թվականին՝ 5430 տ.: Այս ամենը կատարված է վերջին 4 տարվա ընթացքով:

Մենք նույն տեղում չենք կանգնել արդյունաբերության և այդ ճյուղում: Ընդհանարակը ստեղծված են նոր արտադրություններ, կառուցված են նոր գործարաններ: Սակայն մեր պահանջների համեմատությամբ այդ քիչ է: Քիմիական արդյունաբերության առաջ խոշոր պատասխանատու խնդիրներ են կանգնած: Հարկավոր է ավարտել Ստալինոգորսկի քիմիական կոմբինատիվ յարկորդ ու յերրորդ հերթերի շինարարությունը, Գորկու կոմբինատիվ յարկորդ հերթը, պետք է ավարտել Կեմերովոյի, Լիսիչանսկի, Կամեն-ակո-Զալյորոստիեյի շինարարությունը, Չերչիկի կոմբինատիվ շինարարությունը: Վերջինիս արտադրանքն ամբողջապես գնալու յև Միջին Ասիայի բամբակի դաշտերի պարաբռացման համար: Պետք է գործարաններ կառուցել Ալեքսինում և Կամենսկում:

Ուժնդ կծրագրվ զարգացնել պլաստիկ մասսայի և արհեստական մետաքսի արտադրությունը: Կառուցել կալիումի յերկրորդ հանքը և ընդարձակել ապարատի արտադրությունը:

Այս աշխատանքները ավարտելուց հետո միայն մենք կարողանանք ասել, վորորհարային Մխությունն ունի հզոր, իրեն վայել քիմիական արդյունաբերություն: Անհրաժեշտ կլինի առավելագույն կարողություն և յետանոր հայտաբերել, վորակեսզի մինչև 2-րդ հնդամանի վերջն ունենանք քիմիական խոշոր արդյունաբերություն: Այս խնդիրների լուծումը հսկայական լարում կպահանջի, սակայն քիմիական արդյունաբերությունը պետք է հասցվի հարկ յեղած բարձրության և նա կհասցվի:

ՇԻՆԱՅՅՈՒԹԵՐԸ ՅԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂԻԹՅՈՒՆԸ

Այս ճյուղում մենք չորս տարվա ընթացքում ներդրել ենք 1.323 միլ. ռուբլի, ֆոնդերը 1930 թվականի 441 միլ. ռուբլուց առ մեկն հունվարի 1935 թվականի հատցնելով 1.199 միլիոն ռուբլու:

Շինայյութերի արտադրանքը 1930 թվա-

կանի համեմատությամբ կազմում և 136
տոկոս :

Եփնարարական արդյունաբեկությունը
պետք և խիստ կերպով առաջ մղվի :

ՄԵՔԵՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆԸ

Անցնենք մեքենաշինությանը : Մեր մեքենաշինությունն այս չորս տարվա ընթացքում հսկայական չափերի յեւ հասել և մեքենաշինական գործարանները չափազանց խոշոր քանակություն են ներկայացնում՝ դինված ժամանակակից հիանալի տեխնիկայով : Վերջին չորս տարվա ընթացքում մեքենաշինական գործարանները դինված են ամենակատարելազործված զաղցահներով ու մեքենաներով : Վերջին չորս տարվա ընթացքում մեքենաշինության մեջ ներդրված ե 7,580 միլիոն ոռուբլի . հիմնական ֆոնդերը, առ մեկն հունվարի 1931 թվականի 2,349 միլիոն ոռուբլուց աճել են, առ մեկն հունվարի 1935 թվականի հասնելով 6,169 միլիոն ոռուբլու՝ 1930 թվականի համեմատությամբ՝ 262 տոկոս : Ընդհանուր արտադրանքը 1930 թվականի 3,812 միլիոն ոռուբլուց 1934 թվականին հասել է 9,828

միլիոն ոռուբլու . 1930 թվականի համեմատությամբ՝ 258 տոկոս :

Մեկ բանվորին ընկնող արտադրանքը 1930 թվականի 5,662 ոռուբլուց հասել է 9347 ոռուբլու 1934 թվականին, 1930 թվականի համեմատությամբ 168 տոկոս : Ինքնարժեքի իջեցումն ընթացել և հետեւյալ կերպ . 1930—1931 թվականներին իջեցում յերեք տոկոսով, 1932 թվականին՝ չորս տոկոսով, 1933 թվականին՝ 11 տոկոսով և 1934 թվականին՝ 10 տոկոսով :

Ինչպես տեսնում եք, մեքենաշինության աճը հսկայական է : Սակայն այս թվերը դեռ չափ հեռու յեն մեր մեքենաշինության մասին պատկերացում տալուց : Դրա համար անհրաժեշտ է ընդգծել, վոր մեղ հարկավոր և վոչ միայն հսկայական քանակությամբ գործարաններ կառուցել, այլ ամենագլխավորը՝ հարկավոր և տիրապետել տեխնիկային, յուրացնել նոր արտադրությունը, նոր մեքենաները, նոր արտադրանքը, վորը անցյալում մեր յերկրում չեր արտադրվում :

Մենք այս ժամանակվա ընթացքում կառուցել ենք մեքենաշինության այնպիսի հսկաներ, ինչպես Ստալինդրագիր ու Խարկովի արակտորային գործարանները, Գոր-

կու ավտոմոբիլային գործարանը, Մոսկվայի ավտոմոբիլային գործարանը, Զելյաբինսկի ընկ. Ստալինի անվան տրակտորային գործարանը—Հսկաներ այս բառի լիակատար իմաստով։ Ավտոմոբիլային արդյունաբերության այդ գործարանները 1930 թվականին տվել են 4000 բեռնատար մեքենա, իսկ 1934 թվականին մեր ավտոմոբիլային գործարանները տվել են 55.366 բեռնատար ավտոմեքենա, մարդատար ավտոմեքենաներ 1930 թվականին չեն արտադրել, իսկ 1934 թվականին տվել են 17,000. 1930 թվականին տվել են 12,731 տրակտոր, իսկ 1934 թվականին մենք տվել ենք 91,300 տրակտոր, այդ թվում թրթուրավոր տրակտորներ՝ 10,573 հատ։ Կրկնավարի տրակտորներ 1930 թվականին բոլորովին չեն արտադրվել, իսկ 1934 թվականին մեր գործարանները տվել են 2,680 այլպիսի տրակտոր։ Ուրալի մեքենաշինական գործարանը, Կրամատորի գործարանը, Լուտանսկի շոգեքարչերի գործարանը, Խարկովի տուրբինի գործարանը, ինքնաթիոններ պատրաստող ու մոտորային առաջնակարգ գործարանները, գնդակավոր առանցքակալների, գործիքների, դարձյահամաշխանական գործարանները, այս բոլորը մենք

կառուցել ու ավարտել ենք այս տարիների ընթացքում։

Հսկայական չափով ընդարձակվել են այսպես կոչված «ին գործարանները»։ Յես «այսպես կոչված եմ» ասում նրա համար, վոր հազիվ թե մնացած լինի թեկուղ մեկ գործարան, վորը վերակառուցված չլինի, ըստ վորում, վորպես կանոն, հիմնական Փոնդերն ավելացել են 2—3 և ավելի անդամ։

Թե վորքան ե փոխվել մեր մեքենաշինության արտադրանքը, յերևում ե այն բանից, վոր միութենական ձեռնարկությունների գծով մեքենայնության 1934 թվականի 9 միլիարդ ռուբլու արտադրանքի մեջ 1930 թվականից հետո յուրացված նոր արտադրանքը կազմում է համարյա 6 միլիարդ ռուբլի, այսինքն ամբողջ արտադրանքի համարյա յերկու յերբերդական մասը։

Ներկայումս՝ հազվագյուտ բացառությամբ՝ մեր Միության կարիքների համար անհրաժեշտ համարյա վողջ սարքավորումն ու բոլոր մեքենաներն արտադրվում են մեր գործարաններում։

Ներմուծման այն թվերը, վոր բերեց ընկ. Ռոգենգոլցը, ցայց են տալիս, վոր մեքենաների ու սարքավորման ներմուծումը

վերջին տարիների ընթացքում ընկնում է : 1930 թվականին մենք 372 միլիոն ռուբլու մեքենաներ ենք ներմուծել, 1934 թվականին՝ 452 միլիոն ռուբլու, իսկ 1934 թվականի 11 ամագլա ընթացքում՝ միայն 48 միլիոն ռուբլու : Հատ վորում, ինչպես յես ասացի, խորհրդային մեքենաշինության արտադրանքը այս տարիների ընթացքում աճել է՝ 3,8 միլիարդ ռուբլուց հասնելով 9,8 միլիարդ ռուբլու :

Ընկ. Ստալինը մեր կուսակցության 17-րդ համագումարում ասում եր, թե՝ մեքենաշինությունը—դա մեր ժողովրդական տնտեսության վերակառուցման բանալին է : Այդ նշանակում է, վոր մեքենաշինությունը տարեցտարի պետք ե ավելի ու ավելի մեծ քանակությամբ մեքենաներ, աարքավորում ու մեխանիզմներ տա՝ լավագույն վորակի ու բավարար քանակությամբ : Մեքենաշինությունը պետք ե վերակառուցի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը և Խորհրդային Միության պաշտպանության համար տա անհրաժեշտ վողջ սպառագինումը : Նա պետք ե տա ամենակատարելագործված գած մեքենաներ՝ աշխատածավալ պրոցես-

ները, Փիդիկական ծանր աշխատանքները, չինարարական աշխատանքները մեքենայացնելու համար : Մենք մինչեւ այժմ ել զեռ շինարարությունը կատարում ենք բանվորների հակայական մասսայով : Այդ թանգ և նստում ու յերկար ե տևում : Այստեղ պետք ե ասպարեզ տրվի մեքենայացմանը :

Հատկապես սուր ե դրված տրանսպորտի բոլոր տեսակների սպառագինման հարցը : Վոչ վոքի համար գաղտնիք չե, վոր տրանսպորտը ներկայումս նեղն ե գցում ժողովրդական տնտեսությանը : Հակայական քանակությամբ մետաղ, վառելիք, շինանյութեր, սպառաստի ալլրանքներ քնում են տեղերում և փոխարդրման են սպասում : Ծանր Արդյունաբերության ժողովատի գծով քննեցված են ալիքի քան 450 հազար վագոն չփոխարդրված բեռներ : Այդ բեռների հակայական կարիք կա : Առանց այդ նյութերի ժողովրդական տնտեսության՝ հատկապես ծանր արդյունաբերության մեջ չի կարող դարձացման նորմալ ընթացք լինել : Ծանր արդյունաբերությունը պետք ե անվերապահորեն կատարի տրանսպորտի սպառարիզում կուսակցության ու կառավարության կողմից նրա վրա դրված պարտավորությունները : Նա պետք ե 1935 թվականին յերկա-

թուղային տրանսպորտին տա 80,000 վագոն, 1,485 շոգեքարչ, վողջ անհրաժեշտ սարքավորումը, պահեստի մասեր և ռելսեր : Այս վիթխարի ծրագիրը կատարելու համար մենք մորդիլիդացիայի յենթարկեցինք առաջներում վազոններ չարտադրող գործարաններ : Մանր արդյունաբերության համար պատմի գործ և հանդիսանում տրանսպորտին վերաբերյալ ստալինյան պատվերի կատարումը :

Առաջին անգամ մեր դադյահաշխինական գործարաններն առաջալոր, ժամանակակից դադյահաշխնության իրավունքի քննությունն էն բունում : 1935, 1936 և 1937 թվականներին նրանք պետք են 10 հազարից ավելի դադյահաներ տան ավտոմոբիլացին ու ավիացիոն արդյունաբերության համար, պետք են տան հսկայական քանակությամբ դարձնոցմամբիչացին և այլ սարքավորում, վորը մինչև այժմ մենք չենք արտադրում:

Այս ծրագրի կատարումը պատասխան կլինի ընկ . Ստալինին, վորը XIV կուսամագումարում ասաց :

«Մենք ցանկանում ենք արտադրել վաչ միայն ավտոմոբիլներ, այլև ավտոմոբիլներ արտադրող մեթենամեր» :

Մենք համոզված ենք, վոր պատասխանը

կտրպի, վոր վազդյահաշխնությունը քննություն բռնել են՝ Դադյահաշխնությունը ներկայումս կատարվում են վոչ միայն դադյահաշխնական գործարաններում, այլ դադյահաների կեսից ավելին արտադրվում են հատկապես պաշտպանության վրա աշխատող գործարաններում և մյուս մասն ու խոշոր գործարաններում : Իժեկուկի գործարանի «Ուղմուրո» մարկան, Տուլայի գործարանի դադյահաները, հպարտորեն կանգնած են իմպորտային գազդյահաների կողքին :

Ճշգրիտ մեքենաշխնությունը և սպտիկան նույնակես աճել են այս տարիների ընթացքում : Նրանց արտադրանքը 1930 թվականի 72 միլիոն ոսուբլուց 1934 թվականին հասել են 212 միլիոն ոսուբլու : Սակայն այդք քիչ են այն պահանջների համեմատությամբ, վոր ներկայացնում են նրանց ժաղովրդական տնտեսությունը և յերկու պաշտպանությունը :

Զի կարելի կուլտուրական ու գիտական արտադրությունը վարել առանց ուղտիկայի ու չափող գործիքների : Մեր մեքենաշխնության այս ճյուղերի զարդացումը պետք է ամեն կերպ արագացվի, այլապես մենք կաշխատենք աչքի չափով, իսկ աչքի չափով

աշխատանքը վոչ մի կերպ չի կարող բարերել մեզ :

Մեքենաշինությանն այս տարի շինարարական մեխանիզմների հսկայական պատվեր ե տրված՝ 164 միլիոն ռուբլի գումարով։ Այդ պատվերը պետք է կատարվի, ինչ գնով ել թեկուղ լինի։ Ժամանակն ե, ընկերներ, լրջորեն զբաղվելու մեր շինարարական աշխատանքների մեքենայացմամբ։

Մեքենաշինության արտադրանքի պլանը 1935 թվականի համար սահմանված է 11.267 միլիոն ռ.։ Այդ գումարի մեջ արդեն չի մտնում տեղական արդյունաբերության արտադրանքը, վորը 1935 թվականին անջատվեց մեզանից։ Մեր վողջ ժողովրդատնտեսական պլանի կատարումը հսկայական չափաված է մեքենաշինության պլանի կատարումից։ Մեքենաշինության մեջ մենք ունենք բոլոր նախադրյալները 1935 թվականի պլանը, ինչպես և յերկրորդ հընդամյակի վողջ պլանը կատարելու համար։ Մենք հիմնալի գործարաններ ենք կառուցել, տեխնիկայի յուրացումը վատ չի ընթանում, սակայն մեքենաշինության մեջ մենք հսկայական ուեղերգներ ունենք։ Այդ ուեղերգները բանվորական ուժի վոչ-լրիվ ողտագործման մեջ են գտնվում, սարքա-

վորման վոչ-լրիվ ողտագործման մեջ, նյութերի ու նախ և առաջ մետաղի վոչ տնտեսվար ծախսման մեջ։ Պարապ շարժումները մեղանում աներևակայելի յեն։ Ժամանակի չափազանց խոշոր մասը դազգյահն աշխատում է ապարդյուն կերպով, քերծելով ջրողեղված մակարերու, մինչդեռ այդ մակաշերտը պետք է նկազադույն պարապ շարժումով ողտագործվի։

Մինչև այժմ մեր մեքենաշինության բոլոր մեղերը ծածկում եր մետաղի դեֆիցիտը, իսկ այժմ, յերբ մետաղ ավելի շատ ունենք, իսկ ապագայում ել ավելի շատ կունենանք, մեքենաշինությունն ստիպված կլինի մի լավ թափ տալ իրեն։ Պետք է պատրաստ լինի այսոր և եթ մեծ քանակությամբ մետաղ վերամշակելու, իսկ հետևապես մեծ քանակությամբ մեքենաներ ու սարքավորում արտադրելու համար։

Մեքենաշինությունը, կուսակցության 17-րդ համագումարում ընկ. Ստալինի ուժված ցուցումները կատարելու համար, պետք է տա այնքան դազգյահն, սարքավորում և մեխանիզմ, վորքան պահանջում է մեղանից յերկիրը։ Հատ վորում այդ մեքենաների, սարքավորման ու մեխանիզմների վորակն ու կառուցվածքը պետք է անթերի լինեն։ Մե-

քենաների կոնստրուկցիան պետք և անընդհատ կատարելագործվի: Պետք և փոխ առնվեն ամերիկյան ու յելվոպական տեխնիկայի բոլոր լավագույն նմուշները և գործադրվեն մեղանում ու հետագայում համարձակորեն կատարելագործվեն: Այստեղ ամենավտանգավորը տեղում մնալու է: Այստեղից ել կոնստրուկտորի հսկայական դերը: Կոնստրուկտորը մեքենայի հոգին է: Այսքան, վորքան մենք կառուցել ենք գործարաններ, կազմակերպել ենք արտադրությունը, արտադրվող մեքենաների հետագա կատարելագործումն ու նոր կոնստրուկցիայի մեքենաների արտադրությունը կախված է կոնստրուկտորից: Կոնստրուկտորն այսոր մեղանում արտադրության մեջ գեռ չի գրավում իրեն պատշաճ տեղը: Մեր մեքենաշինության մեջ իր տեղը չի գրավել գեռ ևս նաև վարպետը: Իսկ չե՞ վոր նրանից ե կախված այն, թե մեքենան ի՞նչպիսի վորտակի դուրս կդա: Կոնստրուկտորը և վարպետը պետք ե կենտրոնական գեմքը դառնան ձեռնարկության մեջ: Հասկանալի յե, վոր կոնստրուկտորը նոր մեքենաների կոնստրուկցիաներ մշակելիս պետք ե յենի այն բանից, վոր այդ մեքենան արտադրության մեջ կարելի լինի գործադրել գոյթվում

ունեցող սարքավորման հիմքի վրա: Զեռնարկության արտադրական բաժնի կողմէց մանրազնին կերպով պետք ե մշակվի տեխնոլոգիական պրոցեսը:

Մեր մեքենաների վորակը զեռ մինչև այժմ ել միշտ չե, վոր իր դիրքի բարձրության վրա յե գտնվում: Մենք այստեղ հաճախ հանդիսավում ենք արտաքինի խայտառակ հարթարման: Յես Բաղվում տեսել եմ մեր «Բորեց» գործարանի կոմպլեսորները, վորոնք աշխատում են արտասահմանյան կոմպլեսորների կողքին: Աշխատանքի վորակի տեսակետից մեր կոմպլեսորը չի վիճում արտասահմանյան կոմպլեսորին, սակայն արտաքին հարթարման տեսակետից խայտառակ կերպով անփույթ ե պատրաստված: Յես մեր կրամատորի հին գործարանի արտադրած վերամբարձիչ մեքենաները տեսել եմ Մագնիսուայում և կուզնեցկի գործարանում, ըստ վորում վատ մոնտաժի հետևանքով, գատարկ բաների հետևանքով, վերամբարձիչները չեյին աշխատում, իսկ հայթայթողները չեյին հետաքրքրվում դըրանով:

Հարկավոր և յուրացնել՝ վերջապես, այն, վոր մեր բաց թողած արտադրանքը պետք և կոմպլեկտավորված լինի և տե-

սույնան թարձք վորակի, իսկ այն գործարանը, վորն անհամապատասխան վորակի և չկոմպլեկտավորված արտադրանք եւ տալիս, կիսայտառակի իրեն ամբողջ յերկրում:

Մեր մեքենաշինարարները մեկ դժբախտություն ևս ունեն: Յերբ նրանց պատվերներ են առաջարկում, նրանք շատ հաճախ հարց են զնում այն մասին, թե այդ պատվերներն իրենք չեն կարող ընդունել և կատարել, քանի վոր դադյահների պակաս ունեն: Ըստ վորում՝ իրեր կանոն, ստուգման ժամանակ պարզվում ե, վոր յեղածդադյահներն ամենելին լրիվ չափով բեռնավորված չեն, և ճնշում գործ դնելուց հետո պատվերներն ընդունվում ե կատարվում են: Յես չեմ ցանկանում, ընկերներ, անարգել շատ գործարանների ամբողջ յերկրի առաջ, սակայն կասեմ, վոր մենք ունենք գործարաններ, վորոնք առաջալոր են համարվում, իսկ սարքավորումն ոգտագործում են վոչ ավելի, քան 50—60 տոկոսով: Շատ հաճախ այդ գործարաններն աղաղակում են, թե իրենց դադյահները չեն բավականացնում: Այս իսայտառակ յերկույթին պետք եւ վերջ դնել:

Մեր մեքենաշինարարները դեռևս բավականաչափ զարգացած ճաշակ չունեն դեպի

նոր կոնստրուկցիաները, դեպի նոր մեքենաները, մեխանիզմների կատարելագործման նկատմամբ, իսկ առանց դրան անխոռսավելի յեն հետ մնալու ու լճացումը: Նըման կոնսերվատիզմի դեմ պետք ե ամենավճար պայքար ծավալվի:

Այս տարիների ընթացքում մենք հսկայական քանակությամբ նոր արտադրություններ ենք յուրացրել: Այս տարիների ընթացքում մենք մեքենաշինության մեջ վատ կադրեր չենք կոփել, այստեղ մենք ունենք լավ արտադրական աշխատազներ և վոչ վատ կոնստրուկտորներ: Սակայն, վորպեսզի այդ ինժեներները, կոնստրուկտորները զինված լինեն ժամանակակից տեխնիկական գիտելիքներով, նրանք պետք ե անընդհատ կատարելագործեն իրենց գիտելիքները:

ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԲԱԶԱՆ Ե

Ահա, ընկերներ, ինչպես ենք աշխատել մենք այս չորս տարվա ընթացքում ծանըր արդյունարերություն ստեղծելու հա-

մար, բայց մենք ծանր արդյունաբերությունը կառուցել ենք վաչ թե պարզապես նրա համար, վոր այն կառուցած լինենք չենց իր ծանր արդյունաբերության համար, այլ կառուցել ենք, վոր նա կատարի իր գերը, վորպես ժողովրդական տնտեսության մյուս բոլոր ճյուղերի վերակառուցման բան, փոխադրելով նրանց և առաջին գերթին դյուզատնտեսությունը, արտահայտվելով Լենինի խոսքերով՝ «մեքենայական արտադրության» մրա:

Անցնենք այն հարցին, թե ծանր արդյունաբերությունն ինչպես և մատակարարել գյուղատնտեսությանը։ Չորս տարվա ընթացքում ծանր արդյունաբերությունը գյուղատնտեսությանը տվել է՝

Անդրավոր տրակոլը 240,000 հար.

Русский язык 8-322 Банк

Բեռնատաշ ամուսնուհի: 43-535 հայու

Установлено: 8 620 штук

Կամացը պահանջվել 3.030 դրամ:

Լենինի կուսակցության կառուցած ավտոմոբիլային ու տրակտորային գործարանները չորս տարվա ընթացքում գյուղատնտ

տեսությանը տվել են 4,800 հազար ձիու ուժի տրակտոր և կոմբայնի մոտոր :

Իսկ դուք հեշտում եք, թե ինչպես վար-
ւագիմիր իշխը յերազում եր 100 հազար
տրակոսորի մասին:

Ծանը արդյունաբերությունն այդ ավտոմատիկական սրբակառների ու տրակտորների համար տվել է.

ԿԵՐՈՍԻՆ 5.840 հազ. մ.

Հիգրոյն 720 հազ. մ.

ԲԵՆԳԻՆ 687 Հազ. տ.

U. S. M. P. I. 500 *h.m.p. m.*

Ծանր արթյունաբերությունը չորս տարում գյուղատնտեսությանը մատակարարել է.

Հայանականին արակտոբազմութեան

գութան	.	.	.	248,599	հատ
»	»	կորպուսներով		898,055	»
Զիաքարչ գութան	.	.	.	455,616	»
Տրակտորաքարչ շալքացան	.	.	.	96,533	»
Զիաքարչ	.	.	.	109,176	»
Բամբակի կուլտիվատոր	.	.	.	3,531	»
Զիաքարչ խստիւնձ մեքենա	.	.	.	209,716	»
Կոմբայն	.	.	.	30,424	»
Խուրձկապ հնձող մեքենա	.	.	.	99,825	»
Հնձող ու դիզող մեքենա	.	.	.	94,886	»

Վուշ գզով լայնաբերան մեքենա .	2,134	հատ
Յեղիպատշցորենի պիկեր . . .	7,257	»
Տրակառըային կալսիչ . . .	61,758	»
Զիով բանող . . .	6,521	»
Ճակնդեղահան մեքենա . . .	2,931	»

Ծանր արդյունաբերությունը խորհունտեսային և կոլտնտեսային դաշտերի համար պարարտանյութ և արտադրել .

Սուպերֆոսֆատ	2,677	հազ. տ.
Ֆոսֆորային փոշի	1,204	» »
Աղոտային պարարտանյութեր (ամոնիում սուլֆատի փերածած)	485	» »
Հում սիլվինիտ	1,507	» »
Վնասատուների գեմպայքարելու միջոցներ են արտադրված ընդամենը (1926-27 թվերի գներով)	64,6	մէլ ա.

Այսպիսով, ծանր արդյունաբերությունը 4 տարվա ընթացքում գյուղատնտեսությանը տվել և ընդամենը ավելի քան 4 միլիարդ ոուրլու գյուղատնտեսական մեքենաներ, տրակառըային, ավտոմոբիլներ, մետաղահատ դաղդյաներ, նավթի շարժիչներ, լոկոմոբիլներ, զանազան սարքավորում, պլուկատ, մետիդ և վնասատուների գեմ

պայքարելու միջոցներ, տրակառըայիների ու ավտոմոբիլների վառելանյութեր :

Այդ ժամանակամիջոցում գյուղատնտեսությանը տրվել և մետաղով հաշված, վորպես մեքենա, տրակառը, ավտոմոբիլ, պլուկատ, մետիդ 3,600 հազար տոնն մետաղ, վորից 730 հազար տոնն ընտիր և բարձրորակ մետաղ :

Չորս տարվա ընթացքում այդպես և կատարել ծանր արդյունաբերությունն իր պարտականությունը գյուղատնտեսության վերակառուցման նկատմամբ : Ինչպես տեսնում եք, քիչ բան չի արգած, մանավանդյեթե նկատի առնենք, վոր այդ կատարվել և այն շրջանում, յերբ կառուցվում եր ծանր արդյունաբերությունն ինքը : Ներկայումս և հաջորդ տարիներում ծանր արդյունաբերությունն ի վիճակի յե ըլուվին ապահովել մեր գյուղատնտեսության ամբողջ պահանջը : (Մաֆեր) :

Չորս տարվա ընթացքում ծանր արդյունաբերությունը Հաղորդակցության ձանապահների ժողկոմատին տվել ե՝

Շողեքարշ	3,780	հատ
(վարից	4,0	250 հատ)
Ապրանքատար վարոն	85,590	հատ,

Մարդատար վագոն	4,890	հատ,
Զերմաքարշ	12	հատ,
Ելեկտրաքարշ	37	հատ,
Ռելսեր	1.5	միլիոն տ.
Վորոն աւտահովում և 20 հազար կիլոմետր ուղղու ռելսումը:		

Գրոկատ	983	հագ. տ.
Ցերեսի ու աստաղի մետաղ	553	հագ. տ.
Հենակ	72,800	տ.
Գնդերիթ	9,600	"
Գամ	36, 200	"
Հեռագրաթիլ	34, 400	"
Ճողան	4, 200	"

Չորս տարվա ընթացքում Հաղորդակցության ձանապարհների ժողկոմատին տրվել է ավելի քան 6200 հազար տոնն մետաղ անժիջականորեն վրապես չողեքարչ, վագոն, ուկր ու այլ մեքենաներ, սարքավորում, մետիզ ու խողովակ:

Մանր արդյունաբերությունը չորս տարվա ընթացքում Հաղորդակցության ձանապարհների ժողկոմատին տվել է 76,5 միլիոն տոնն ածուլ և 10,6 միլիոն տոնն նավթային վառելանյութ:

Ընդամենը 3 միլիարդ ռուբլու մեքենա, սարքավորում ու վառելանյութ:

Դա, իհարկե, այնքան ել քիչ չե, բայց բավկական չե՝ համեմատած Հաղորդակցության ձանապարհների ժողկոմատի պահանջի հետ։ Մանր արդյունաբերությունը 1935 թվականին Հաղորդակցության ձանապարհների ժողկոմատին պետք ե տա շատ ավելի և' շարժական կազմ, և' մետաղ, և' վագոն, և' չաղորդակցության ձանապարհների ժողկոմատին անհրաժեշտ ամեն ինչ:

Ցերկաթուղային տրանսպորտը շատ մեծ նշանակություն ունի ծանր արդյունաբերության համար։ Առանց տրանսպորտի կանոնավոր սպասարկման ծանր արդյունաբերությունը չի կարող զարգանալ։ Տրանսպորտում տեղի ունեցող նույնիսկ նվազագույն խափանումները տենդով են համակում մեր ամբողջ արդյունաբերությունը։

Մանր արդյունաբերությունը պետք է սպասարկի չաղորդակցության ձանապարհների ժողկոմատին, նա պետք ե տա վեցնկիս այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ է, բայց թող ներելի վնի ինձ բարեկամական քննավատության կրտսով ասել, վոր Հաղորդակցության ձանապարհների ժողկոմատը ևս պետք ե ավելի լավ սպասարկի ծանր արդյունաբերությանը, քան սպասարկում և այսոր (ծափեր) և Հաղորդակցության ձա-

նապարհների ժողկոմատը պետք և ավելի
լավ ոգտագործի նրան արվող վագոնները,
շոգեքարչերը և ասրբավորումը, քան այ-
սոր։ (Զայնել տեղերից—«Ճիշտ ե»)։

Միանգամայն անբավարար պետք և հա-
մարել վագոնների ոգտագործումը մեր յեր-
կաթուղայինների կողմից, յերբ վագոնը մի
ժամում անցնում է ամենաչափը 5 կիլոմե-
տրը և այդպիսով մի որում անցնում է ա-
մենաշառը 120 կիլոմետր։ Վագոնների այդ-
պիսի ոգտագործումը վոչչով չի կարելի
արդարացնել։

Ծանր արդյունաբերությունը չորս տար-
վա ընթացքում թեթև, սննդի ու անտառա-
յին արդյունաբերությանը, ճանապարհա-
յին շնարարությանը և կապին մատակա-
րարել և 2 միլիարդ 400 միլիոն ռուբլու ծո-
վային ու դետային նավեր։

Ինչպես տեսնում եք, ծանր արդյունաբե-
րությունն զբաղվել է ժողովրդական անտե-
սության բոլոր ճյուղերի վերապինումով,
ընդ վորում տարեցտարի ավելի շատ և
մատակարարել ժողովրդական անտեսու-
թյան մյուս ճյուղերին և ավելի ու ավելի
պակաս և տրվել հենց ծանր արդյունաբե-
րության զինավորմանը։ Որինակ, 1984 թւ-
վականին Ծանր Արդյունաբերության ժող-

կոմատի մեքենաշինությունը տվել և 6 մի-
լիարդ 700 միլիոն ռուբլու ապրանքային
արտադրանք, դրանից ծանր արդյունաբե-
րությանը տրվել և միայն 2-130 միլիոն
ռուբլու, կամ մեքենաշինության ամբողջ
արտադրանքի 32 տոկոսը, իսկ մյուս 4 մի-
լիարդ 570 միլիոն ռուբլու արտադրանքը՝
մեքենաշինության ամբողջ արտադրանքի 68
տոկոսը, տրվել է ժողովրդական անտեսու-
թյան մյուս ճյուղերին։

Այս տարիների ընթացքում ծանր ար-
դյունաբերությունն արտադրել և ավտոմո-
բիլ, տրակտոր, ինքնաթիռ, տանկ, շոգե-
քարշ, դիգել, լոկոմոբիլ, նավթային շար-
ժիչ և այլն 34 միլիոն ձիու ուժի ընդհա-
նուր կարողությամբ։

Նախապատերազման արդյունաբերու-
թյան շարժիչների կարողությունը 1913 թւ-
վին կազմել է մոտ 3 միլիոն ձիու ուժ։

ԼԱՅՆ ՍՊԱՌՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծանր արդյունաբերությունն զբաղվել է
վոչ միայն մետաղաձուլական գործարան-
ներով, տրակտորներով ու այլ մեքենանե-

բով, այլև տվել եւ յերկրին լայն սպառման
արտադրանք։ Այս տարիների ընթացքում
նա տվել է.

Թուշե ամանեղեն	59,2	հազ. տոնն.
Եկրկաթի »	101,6	» »
Գերանդի.	14,468	» հատ
Կերոսինկա	2,349	» »
Պրիմուս	685	» »
Դանակ ու պատառաքաղ .	14,935	» գույլ
Կերոսինի լամպ	4,405	» հատ
Ելեկտրուայլ	130,6	միլիոն հատ
Ելեկտրոջեռուցիչ սարք .	11,211	հազ. սուբլու
Հիծանիվ	594,6	» հատ
Գրամանի ժամացույց .	328,1	» »
Մեզանի զարթուցիչ .	1,727,8	» »
Գատիփան	221,5	» »
Գլասարինկա	8,1	միլ.
Կորի մեքենա (ընտա-		
նիքի).	1,345,4	հազար.
Ֆոտոպապրոտ (9×12)	1931	» »
Չուուկ	889,5	» գույլ
Եկրկաթի մահճակալ	1,263	» հատ
Մախ	45,8	» տոնն.
Ռեզինե կոչիկ . . .	245,8	միլիոն զույլ
Ներբանացու պլաստին	60,0	հազ. տոնն.
Մամլաթ	31,7	միլիոն մետր
Կահուրչի գործվածք .	5,412	հազ.

Գլասարիկ մասսաներից իրեք (ատամի վրձին, սանը, խաղալիք, պիտույքներ և այլն) 84,5	միլիոն ոռութու
Ներկեր (լակ, անիլին և այլ քիմիկատներ)	59,1 միլիոն ոռութու
Կերոսին	4,148 հազ. տոնն.

Զորս տարվա ընթացքում լայն սպառման առ-

շանք եւ տվել ընդամենը 4,653 միլիոն ոռութու

Այդ, իհարկե, բավական չե։ Մեր կու-

սակցության կենտրոնական կոմիտեն և
ընկ. Ստալինը մեր ծանր արդյունաբերու-

թյունից պահանջում են, վոր նա ավելի
զբաղվի լայն սպառման առարկաների ար-

տադրությամբ, և նրանք իրավացի յեն,
վորովհետու ծանր արդյունաբերությունը
չատ ավելի հնարավորություններ ունի ա-

վելի մեծ քանակությամբ լայն սպառման
առարկաներ տալու, քան տալիս եւ այ-

սոր։ Սակայն լայն սպառման առարկաները
պետք եւ չատ բարձրորակ լինեն։ Նկատի
ունեցեք, վոր մեր յերկրի միլիոնավոր ու

տասնյակ միլիոնավոր մարդիկ մեր արդյու-

նաբերության մասին զատելու յեն նայած
այն հանդամանքին, թե լայն սպառման ինչ-
ոլիսի առարկաներ ենք հրամցնում մենք
նրանց։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ

Ծանր արդյունաբերության մեջ աշխատում են 6 միլիոն 111 հազար բանվոր, տեխնիկ, ինժեներ, տնտեսվար, բանմատակարարման բաժնի աշխատաղներ, գիտական աշխատողներ և նրանց սպասարկող անձնակարգ։ այդ թվից մոտ կես միլիոն հոգի՝ կին։ Աշխատավարձի ամսական Փոմլը կաղմում է 1 միլիոն ռուբլի։

Այդ հսկայական բանակի համար պետք էր կառուցել բնակարաններ, դպրոցներ, հիվանդանոցներ, մանկական հիմնարկներ, ակումբներ, ճանապարհներ և այլն։ Մի խոսքով՝ պետք է կառուցել նոր քաղաքներ, մի բան, վոր մենք արել ենք և առում ենք։ Այս տարիների ընթացքում մենք կառուցել ենք Մադնիտոգրոսկը, Ստալինակը, Բերեգնյակին, Զելյարինսկի լավագույն մասը, Սոլիկամսկը, Ստորին Տագիրը և ածխային չրջանների քաղաքները։ Առ 1-ն հունվարի 1931 թ. ծանր արդյունաբերության բնակարանային տարածությունը կազմում էր 11 միլիոն 700 հազար քառ. մետր, իսկ առ 1-ն հունվարի 1935 թվականի կազմում է 23 միլիոն քառ. մետր, 196 տոկոս ավելի՝ համեմատած 1930 թվականի

հետ, ընդ վորում ածխային արդյունաբերության մեջ բնակարանային տարածությունն ավելացել է 81 տոկոսով, նավթարդյունաբերության մեջ՝ 36 տոկոսով, սևմետալուրդիայի մեջ՝ 186 տոկոսով, մեքենաշինության մեջ՝ 200 տոկոսով, քիմիական արդյունաբերության մեջ՝ 325 տոկոսով և մյուս ճյուղերում՝ 48 տոկոսով։ Այս չորս տարվա ընթացքում ծանր արդյունաբերության սոցիալ-կենցաղային և կոմունալ չինարարության մեջ ներգրավել է 3 միլիոն ռուբլի։ Սակայն այդ բնակավառում մեր առջև դեռ հսկայական խնդիրներ են կանգնած։ Մենք պետք ենք բնակարանով ապահովինք մեր բանվորներին, ինչեներներին, տեխնիկներին ու ծառայողներին, այն եւ լուսավոր, հարմար և լավ բնակարաններով։ Մշակվել են Մագնիսուգորսկ և Տագիլ քաղաքների շինարարության նոր նախագծեր և այդ նախագծերի համաձայն կառուցվելու յեն իսկական, բարիս բուն իմաստով սոցիալիստական քաղաքներ։ Այս տարի բնակարանային կենցաղային չինարարությանը հատկացվում է 920 միլիոն ռուբլի։ Այս տարիների ընթացքում բանվորների աշխատավարձն ավելացել է 76,9 տոկոսով, վորից՝

Մեքենաշինության առարկվում 67,9 տոկոսով:
 Ելեկտրոկայանների գծով 68,1 տոկոսով:
 Քիմիական արդյունաբերության
 մեջ 64,5 տոկոսով:
 Նավթարդյունաբերության գծով 96,5 տոկոսով:
 Մետալուրգիայի գծով 87,2 տոկոսով:
 Ածխարհյունաբերության առարկա-
 բերում 94,2 տոկոսով:
 Ցերկաթահանքային արդյունաբե-
 րության գծով 110,9 տոկոսով:

Ինժեներա-տեխնիկական կազմի աշխա-
 տավարձն ավելացել է 77 տոկոսով: Այս
 չորս տարվա ընթացքում շատ բան և ար-
 ված աշխատավարձը ճիշտ հիմքերի վրա
 դնելու և հավասարեցման դեմ պայքարելու
 ուղղությամբ, վորովհետև չորս տարի ա-
 ռաջ հավասարեցումն իշխում եր մեր ար-
 դյունաբերության մեջ, բայց և այսպես
 առաջմ նրան դեռ վերջ չի տրվել: Այս,
 ինչ վոր կոչվում է միջին աշխատավարձ,
 վոչ միայն չի նպաստում աշխատանքի ար-
 տադրողականության ավելացմանը, այլ
 ընդհակառակը՝ նրա արգելակն է: Աշխա-
 տանքի արտադրողականության բնագավա-
 ռում մենք զդալի հաջողություններ ու-
 նենք՝ 49 տոկոս աճում: Սակայն, յեթե

մենք վերջ տանք հավասարեցմանը, միջին
 աշխատավարձին և անցնենք պրոդրեսիվ
 գործակարձին, ապա աշխատանքի արտադ-
 րողականությունը և աշխատավարձը կը-
 բարձրանան ավելի մեծ չափով:

Մենք աշխարհում միակ յերկիրն ենք,
 վոր ունենք 7-ժամյա աշխատանքային որ,
 սակայն այդ 7 ժամն այսոր լրիվ չի ող-
 տագործվում: Աշխատավարձի ճիշտ կազ-
 մակերպումը լավագույն լծակ կհանդիսանա
 աշխատանքի արտադրողականությունը
 բարձրացնելու համար: Այսուեղ, վորտեղ
 ճիշտ և կազմակերպված աշխատավարձը,
 այնուեղ մենք ամէլեցուցիչ արդյունքներ ու-
 նենք: Վերցնում եմ միայն յերկու գործա-
 րան՝ Մակեյվկայի ընկ. Կիրովի անվան
 մետաղաձուլական գործարանը և Մոսկվա-
 յի «Սերպ ի Մոլոտ» գործարանը: Վեր-
 ջին գործարանում ընդհանուր արտադրան-
 քը չորս տարում ավելացել է 82 տոկոսով,
 մինչդեռ բանվորների թիվը նվազել է 22
 տոկոսով: Աշխատանքի արտադրողականու-
 թյունը բարձրացել է 134 տոկոսով: Դա
 արդյունք և այն մեծ աշխատանքի, վոր կա-
 տարվել է թե՛ արտադրությունը կազմակեր-
 պելու, և թե՛ առաջատար պրոֆեսիաների
 Փոնդ առանձնացնելու ուղղությամբ: Մոսկ-

վայի «Սերպ կ Մոլոտ» գործարանի մարտենյան ցեխի բանվորի միջին աշխատավարձը 1934 թ. Յ-րդ յեռամսյակում կաղմում եր 261 ո., նոյեմբերին՝ 271 ոռուբլի, իսկ 8-րդ կարգի պողպատաձույլն այդժամանակաշրջանում ստացել է 550 և 705 ո.: Պողպատաձույլի ոգնականն ստացել է 350 և 374 ոռուբլի։ Այդպիսով միջինը 261 ո., իսկ պողպատաձույլն ստանում է 705 ո.: Աչա թե ինչումն ե բանը, ահա թե ինչու ընկ. Ստեպանովը կարողացել է միաժամանակ բարձրացնել և՝ աշխատանքի արտադրողականությունը և՝ աշխատավարձը։

Նույնը մենք սեսնում ենք Մակեյկվայի կիրովի անվան գործարանում։ Այդտեղ ընկեր Գվախարիային հաջողվել է հասնել այն դրության, վոր նա արտադրում է մեր յերկրում ամենաեժան թուղը և տալիս ե ամենաբարձր աշխատավարձը։ Մակեյկվայի գործարանի դամնայի ցեխի պետը վաստակում է 2—2,5—3 հազար և ավելի՝ նայած թե ինչպես ե կատարում նա իր պլանը։ Այդպես են վաստակում նաև բանվորները։

Այս տարիների ընթացքում մենք ստեղ-

ծել ենք պարենային նշանակալից բաղման Սեր բանմատակարարման բաժնները բաշխականաչափ նշանակալից միջոցներ ունեն։

ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐԸ

Բնկ. Ստալինն իր նշանավոր վեց պայմաններում մատնանշեց, վոր անհրաժեշտ ե արդյունաբերության մեջ ակտել կուտակել։ Ի՞նչ ենք անում մենք այդ ուղղությամբ։

1931 թվականին ծանր արդյունաբերությունն ուներ 430 միլիոն ոռուբլու չահույթ, 1934 թվականին ծանր արդյունաբերության շահույթը կազմում էր մի միլիարդ 336 միլիոն ոռուբլի։ աճումն ավելի քսան յերեք անգամ։

Կուտակումներն աճման ամենամեծ տեսպըն ունեն մեքենաշինության ասպարիզում։ 1931 թվականին մեքենաշինությունը տվեց 122 միլիոն ոռուբլի չահույթ։ 1934 թվականին՝ 497 միլիոն։ Մեքենաշինության ամենաշահավետ ճյուղերն են ավտո-տրակտորային ու ելեկտրո-տեխնիկական ճյուղերը։ Շահույթի աճումն արդյունաբերության այդ ճյուղերում կազմում էր՝

1931 թվականին ավտո-տրակտորային արդյունաբերությունը տվեց 6 միլիոն ոռությ չահույթ, 1934 թվականին՝ 229 միլիոն ոռությ: Ելեկտրոսեխնիկան՝ 1931 թվականին՝ 63 միլիոն, 1934 թվականին՝ 192 միլիոն: Ստալինգերադի և Խարկովի գործարանների տրակտորների արտադրությունը դեռ 1932 թվականին վնաս եր տալիս, իսկ 1934 թվականին այդ գործարանների արակտորների արտադրությունը, ինքնարժեքն իջեցվելու շնորհիվ, յուրաքանչյուր տրակտորին տվեց 400 ոռությի շահույթ:

Ծանր արդյունաբերության մեջ շահույթի կուտակման և ամորտիվացիայի ընդհանուր գումարը 1931 թվականին կազմում եր 870 միլիոն ոռությ, իսկ 1934 թվականին կազմում եր 2 միլիարդ 37 միլիոն ոռությ:

Այս տարիների ընթացքում կատարվել ե կազմակերպական հսկայական աշխատանք: Նախ փոքրացվեցին կոնկրետ ղեկավարման համար միանգամայն անընդունակ մեծ միավորումները, ապա վերացվեցին: Կառավարման քառողակ սիստեմի փոխարեն կազմակերպվեց յերկողակ սիստեմ: Ց նւնցիոնա-

լությունը վերացվել է, բայց դեռ վոչ վերջնականապես:

Պայքար և մղվում, հաջողություններ են ձեռք բերվել, բայց դեռ հեռու յեն վոչընչացված լինելուց կառավարման դրասենեկային-բյուրոկրատիկ մեթոդները: Գլխավոր վարչություններից ու տրեստներից հսկայական թվով աշխատողներ փոխադրվեցին ուղղակի ձեռնարկությունները, գործարանային վարչություններից՝ ցեխերը: Ծանր Արդյունաբերության ժողկոմատի միավորումների նախկին պետերը, առանձին վարչությունների նախկին պետերն այժմ, վորակես դիրեկտորներ, նստած են դործաբաններում և բավականաչափ լավ են աշխատում: Յես կարծում եմ, վոր այդ դիրեկտորներն այժմ ավելի գոհ են, քան այն ժամանակ, յերբ նրանք նստած ելին վարչության մեջ: (Զայներ՝ «Ճիշտ ե»):

Փոխադրել կարելի յե, յեթե կադրեր կան: Մեր տեխնիկական բարձրագույն ուսումնական հաստատությունները, տեխնիկումները և բանֆակները չորս տարվա ընթացքում ավելի 39 հազար ինժեներ, 50 հազար տեխնիկ, 60 հազար հոգի բանֆակներից և 347 հազար հոգի գործուաներից: Մեր տեխնիկական ԲՈՒՀՀերում, տեխնի-

կումներում, բանֆակներում և գործուսներում սովորում են 377 հազար հոդի. Դրանցից 91 հազարը կին: Դրանք մեր ապագա կաղըրերն են:

Այս տարիների ընթացքում շատ բան է արված կաղըրեր ստեղծելու համար: Մենք կաղըրեր ունենք: Նրանց մեջ տաղանդավոր կարդիկ Քիչ չեն: Այստեղ յես չեմ հիշածարդիկ Քիչ չեն: Նրանց ազգանունները, վորովհետև անկարելի յե բոլորին թվել:

Հարդակոր եր մեծ ջանք ու ճիռ գործադրել այդպիսի կարձ ժամանակամիջոցում հում նյութից պատրաստված մարդիկ կերտելու համար: Դրա վրա մենք շատ գըլուխ կոտրեցինք: Մենք պատրաստեցինք միայն ինժեներներ, տեխնիկներ, տընվոչ միայն ինժեներներ, տնտեսավարներ ու հաշվառենագետներ, տնտեսավարներ ու հաշվառահետ, այլև, նրանց հետ միասին, միավահետ, այլև, նրանց հետ միասին, միավահոր բանալորներ: Հույս ունեմ, վոր տնտեսավարներն այնպես չեն հասկանա, թե այդ ասպարիզում ամեն ինչ արված է: այդ իհարկե, վո՛չ ամեն ինչ: Դեռ անհըմուչ, իհարկե, վո՛չ ամեն ինչ: Դեռ անհըմուչ և աշխատել կաղըրերի վրա և ամերաժեշտ աշխատել կաղըրերի վրա և ամերաժիշտ մեր ինժեներները, տեխնիկները, տնտեսագետները, տնտեսավարները սկսութեանից հետո և աշխատեն իրենց վրա, վորպեսզի հետք չմնան:

Նկատի ունեցեք, վոր ով չի աշխատում իր վրա, նա հետ ե մնում: Մեր կաղըրերն աճում են կոմունիզմի մեծ շինարարության եպօխայում, նրանք բոլոր հնարավորություններն ունեն իրենց գործի իսկական վարպետները դառնալու:

ՀԱՍՏԵԼ ՅԵՎ ԱՆՑՆԵԼ

Ծանր արդյունաբերության մեջ առաջին հնդամյակը մենք գերակատարեցինք, տալով 109,6 տոկոս: Ծանր արդյունաբերության 2-րդ հնդամյակի 2-րդ տարվա պլանը մենք գերակատարեցինք, տալով 1934 թ. ժողովում 27 տոկոս աճ՝ դովորական տնտեսությանը 27 տոկոս աճ՝ դովորական ուղղակի փոխարեն: Մենք առաջին անդամ կատարեցինք ինքնարժեքի իշեցման ծրագիրը, իշեցնելով ինքնարժեքը 7 տոկոսով:

Ծանր արդյունաբերությունն ամբողջ թափով պայքար և մղում 3-րդ տարվա պլանը և ամբողջ յերկրորդ հնդամյակի պլանը կատարելու համար:

Չորս տարի առաջ մեր ծանր արդյունաբերությունն սկսեց նոր գործարանների, նոր հանքերի, նոր շախտերի և նոր ելեկ-

տրոկայանների շինարարությունը վիթխառ
ը չափով, զարգացնելով բուռն տեմպեր :
Ընդամեն մենք յեղակետ ենք ունեցել մեր
մեծ ուսուցիչ և նենինի «Համանել ու անցնել»
դրույթը և մեր առաջնորդ ընկ . Ստալինի
այն ցուցումը, վոր տվել ե տնտեսավարների
առաջին խորհրդակցության ժամանակ, այն
ե՝ «Մենք հիմուն—հարյուր տարով յետ
ենք մնացել առաջավոր յերկիրներից : Այդ
տարածությունը մենք պետք ե անցնենք
տասը տարում» :

Ուրեմն ի՞նչ տեղ հաջողվեց գրավել մեղ
համաշարհային տնտեսության մեջ :

Անցնենք փաստերին : Ածխարդյունաբերության ասպարիգում մեր յերկիրը 1930 թվականին գրավում եր հինգերորդ տեղը, իսկ 1934 թվականին գրավեց չորրորդ տեղըն աշխարհում : Նավթի ասպարիգում այս բոլոր տարիների ընթացքում մենք հաստատուն կերպով գրավել ենք աշխարհում յի լիրորդ տեղը : Թուշի ասպարիգում 1930 թվականի հինգերորդ տեղից մենք 1934 թվականին անցանք յերկրորդ տեղը . մեզանից առաջ ե միայն Ամերիկան : Պողպատի ասպարիգում հինգերորդ տեղից անցանք յերրորդը : Տրակտորների արտադրության ասպարիգում 1934 թվականի յերկրորդ

տեղից մէնք 1934 թվականին անցանք առաջին տեղն ամրող աշխարհում : (Յերկարածու ծափեր) : Ունենք Յելքոպայում ամենահզոր գյուղատնտեսական մեթենաշինությունը : Բեռնարկիր ալտոների արտադրության ասպարիզում մէնք 1930 թվականի իններորդ տեղից 1934 թվականին բարձրացած յերրորդ տեղն աշխարհում . մեղանից առաջ են Ամերիկան և Անգլիան : Ելեկտրոներգիայի արտադրության ասպարիզում 1913 թվականին մեր յերկիրը գտնվում էր 15-րդ տեղում, դեռ 1930 թվականին մէնք դրավում ենք 9-րդ տեղը, իսկ այս չորս տարվա ընթացքում մէնք բարձրացանք աշխարհում յերրորդ տեղը և գտնվում ենք Անգլիայի հետ միևնույն մակարդակի վրա :

Այս տարիների ընթացքում, վոր կապի-
տալիստական բոլոր յերկիրների համար
հանդիսանում էին ճշնաժամի շարունակու-
թյունը, մեր յերկրի ծանր արդյունաբերու-
թյունն առանց կանգ առնելու շարունակում
էր իր հաղթական յերթը՝ ալիքացնելով իր
արտադրանքը 1928 թվականի հետ համեմա-
տած ավելի քանի չորս անգամ, մինչդեռ Ա-
մերիկայի Միացյալ Նահանգները մինչև
այդ մեջ մնում են 1928 թվականի արտադ-

բության 67 տոկոսի մակարքակի վրա,
Գերմանիան՝ 81 տոկոսի, Ֆրանսիան՝ 84
տոկոսի և Անգլիան՝ 104 տոկոսի վրա :

Այն ժամանակ, յերբ մեր յերկրում վոչ
մի զրծագուրկ չկա, կապիտալիստական
յերկրներում ներկայումս դրծագրկու-
թյունից տառապում են ավելի քան 22 մի-
լիոն հրաֆի :

Զարգացման տեմպը բնորոշելու համար
կարելի յէ բերել հետեւյալ որինակը : Թուղթի
ձուլումը 5 միլիոնից 10 միլիոն տոնն հաս-
ցնելու համար Ֆրանսիային հարկավոր յե-
ղավ 7 տարի, Գերմանիային՝ 10 տարի,
Ամերիկային՝ 15 տարի, Անգլիային՝ 36
տարի, իսկ մեզ միայն չորս տարի : (Բուն
ծափեր) :

Այժմ այդ չեն կարող ժխտել վորեւ յեր-
երի քիչ թե շատ իրազեկ անձինք՝ սկսած
թերթի ռեպորտյորներից մինչեւ հեղինակա-
վոր տնտեսագետները և պետական գործիչ-
ները : Առավել ևս տարորինակ ե թվում այն
հայտարարությունը, վորեւ արել եր պարոն
Հիտլերը 1934 թվի ապրիլի 16-ին՝ Բեռլի-
նում գումարված Ալյաստանքի կոնքրետում :

«Այդ Խորհրդային Ռուսաստանը, —
ասում ենա, — հիշեցնում ե այն մար-
դուն, վորը գնում ե ճահճով՝ հենված

իւժեղ մարդու թեկին : Այդ Խորհրդային
Ռուսաստանը շարունակ հենվում ե կա-
պիտալիստական պետությունների թե-
ղին . նա կապիտալիստական պետություն-
ներից վերցնում ե իր բանվորական ու-
ժը, վերցնում ե ինժեներներ ու մեքենա-
ներ, վերցնում ե ամեն ինչ» :

«Հարկավոր եր նրան կանգնեցնել իր
սեփական վոտքերի վրա — Ռուսաստանի
նման յերկրի համար դա միանգամայն հը-
նարավոր կլիներ՝ և ասել նրան՝ այժմ
ինքներդ տաեղծեցնեք ձեզ համար ձեր դը-
րախութ : Ահա այն ժամանակ մենք կը-
տեսնեինք արդյունքները» :

Դա պ . Հիտլերի միակ պարծենկուտ հայ-
տարարությունը չե :

Պարոն Հիտլերն իր «Խմ պայքարը» գըր-
քում համոգելով իր կողմնակիցներին, թե
Խորհրդային Միության հետ ռազմական
դաշինք կնքելը Գերմանիայի համար ձե-
ռընտու չե, ասում ե .

«Աշխարհիս ընդհանուր մոռորացմա-
նը, վորն առաջիկա պատերազմում վիթ-
խարի, վճռական դեր ե խաղալու, մենք
չելինք կարող համարյա վոչինչ հակագ-
րել : Գերմանիան ինքը խայտարակորեն
հետ ե մնացել այդ կարևոր ասպարիզում :

Բայց այդպիսի պատերազմի դեպքում
նա իր քչով պետք է պահեր նաև Ռու-
սաստանը, վորովհետեւ Ռուսաստանը դե-
ռևս չունի վոչ մի սեփական գործարան,
վորը կարողանար իրոք պատրաստել ա-
սենք իսկական կենդանի բեռնակիր ավ-
տո»: (Ծիծաղ, ծափեր):

Պարոն Հիտլերի այդ բոլոր պարծենկոտ
հայտարարությունները վկայում են միայն,
վոր նա կատարելապես տգետ ե ընդհանրա-
պես տնտեսական ու տեխնիկական զարգաց-
ման հարցերում, մանավանդ մեր յերկրի
տնտեսական-տեխնիկական զարգացման
հարցերում: (Բուռն ծափեր):

Ինչ վերաբերում է Գերմանիայի հետ
ուղղմական դաշինք կնքելուն, ապա մենք
յերեք մտադիր չենք յեղել և չենք մտածել
այդպիսի դաշինք կնքել: Այդ շատ լավ
հայտնի յե բոլորին և պետք ե յենթադրել,
վոր հայտնի յե նաև պ. Հիտլերին, համե-
նայն դեպս պ. Հիտլերը կարիք չունի ան-
հանդստանալու դրա համար: (Բուռն
ծափեր):

Պարոն Հիտլերը կարող է հանդիսատ լի-
նել, վոր նա ստիպված չի լինի վոչ մի մո-

տուր, վոչ մի բեռնատար առանձնացնել մեր
կարմիր Բանակի համար, ԽՍՀՄ դրա կա-
րիքը չի գդում: (Բուռն ծափեր):

Ինչպես հայտնի յե, մեր կառավարու-
թյան քաղաքականության նպատակն ե՝
պահպանել խաղաղություն, բայց մենք շատ
լավ դիտենք կասլիտալիստական գայլի ո-
րենքը, վոր հարգում են միայն ուժեղին,
իսկ թույլերին խփում են: Յենելով դը-
րանից մենք համառորեն վարելով խաղա-
ղության քաղաքականություն, միևնույն
ժամանակ չենք մոռացել և չենք մոռանում
մեր մեծ հայրենիքի պաշտպանության մա-
սին: (Ադմիլալից ծափեր):

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
նախագահ ընկ. Մոլոտովը խորհուրդների
համակում արում իր տված զեկուցման մեջ
հայտարարեց, վոր մեր բանակում մի
կարմիր բանակայինին հասնող մեխանիկա-
կան ձիու ուժի քանակն ավելացել ե չորս
անգամ: Ընկ. Տուխաչևսկին յերեկվա իր
փայլուն յելույթի ժամանակ ձեզ ավելի
մանրամասնորեն պատմեց, թե ինչպես ե
զինված կարմիր բանակը մոտոռներով,
բեռնակիր ավտոներով և պաշտպանության
այլ միջոցներով: Մենք ամբողջովին հաս-

սաստում ենք այդ և հայտարարում, վոր ծանր արդյունաբերության հայժայթումը կարմիր բանակին այս տարիների ընթացքում ավելացել ե չորս-հինգ անդամ։ Յեվ թույլ տվեք խորհուրդների 7-րդ համակառումարին այսոր հայտարարել, վոր ծանր արդյունաբերությունը պատրաստ է կատարելու իր պարտավորությունները յերկու պաշտպանության նկատմամբ։ Նա Կարմիր բանակին կտա այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ ե մեր մեծ հայրենիքի սահմանները մեր թշնամիներին անմատչելի դարձնելու հումար։ (Բուն ովացիա, քացականուրբյուններ, «ուռուա», ամրուշ դակիճը վոտքի յե կանգնում)։

1935 ԹՎԱԿԱՆԻ ԽՆԴՐԵՐԸ

Մեր կուսակցության 17-րդ համագումարում ընկ. Ստալինը՝ կուսակցության և արդյունաբերության աշխատավորների առջև դեմք հետևյալ հերթական ինդիքը:

1) Պահպանել մեքենաշինության ներկայիս առաջատար դերն արդյունաբերության սիստեմում։

2) Վերացնել աև մետալուրգիայի հետամիալը։

3) Կարգավորել գունավոր մետալուրգիայի գործը։

4) Ամբողջ թափով ծավալել տեղական ածուխների արդյունահանումը բոլոր արդեն հայտնի շրջաններում, կազմակերպել ածխի արդյունահանման նոր շրջաններ (որինակ չեռափոր Արենելքի Բուրեյայի շրջանում), վերածել կուրբասը յերկրորդ Դոնբասի։

5) Լըջորեն ձեռնարկել նավթի բազայի կազմակերպման Ուրալյան լեռնաշղթայի արևմտյան և հարավային լանջերի շրջաններով։

6) Ծավալել լայն սպառման ապրանքների արտադրությունը բոլոր տնտեսական ժողովում։

7) Ծավալել տեղական խորհրդային արդյունաբերությունը, հնարավորություն տալ նվան նախաձեռնություն յերեան բերելու լայն սպառման ապրանքների արտադրության գործում և ցույց տալ նրան հնարավոր ոգնություն հումքով ու միջոցներով։

8) Լավացնել բաց թողնվող ապրանքների վորակը, դադարեցնել վոչ-կոմպլեկտային արտադրանքի բացթողումը և պատժել

բոլոր այն ընկերներին՝ չնայելով անձնաւ-
վորություններին, վորոնք խախտում կամ
չըջանցում են խորհրդային իշխանության
այն որենքները, վորոնք վերաբերում են
արտադրանքի վորակին և կոմպլեկտայնու-
թյանը :

9) Ապահովել աշխատանքի արտադրո-
ղականության սիստեմատիկ աճը, ինքնար-
ժեքի իջեցումը և տնտհաշվարկի արմատա-
ցումը :

10) Վերջնականապես վոչնչացնել գի-
տապրկությունն աշխատանքի ասպարիզում
և հավասարեցումն աշխատավարձի սիս-
տեմում :

11) Վերացնել զեկավարման գրասենյա-
կային-բյուրոկրատական մեթոդը տնտե-
սական ժողկոմատների բոլոր ողակներում,
սիստեմատիկաբար ստուգելով զեկավար
կհնարոնների վորոշումների և ցուցումների
հատարումն ստորադաս մարմինների կող-
մից» :

Մանր արդյունաբերության աշխատող-
ներն իրենց լենինյան կուսակցության զեկա-
վարությամբ ամբողջ 1934 թվականի ըն-
թացքում պայքար են մղել ընկ . Ստալինի
կողմից մեղ տրված առաջադրանքներն իրա-
դորձելու համար : Դրա չնորհիվ մենք

ունենք արդեն առաջին նշանակալից հաջո-
ղությունները : Մանր արդյունաբերությունը
խորհուրդների 7-րդ համագումար յեկալ
գերակատարելով 1934 թ. պլանը՝ նա պատ-
րաստ է այլելի մեծ ուժով ու յեռանդով
շարունակել իր պայքարը՝ 1935 թվի պլանը
և յերկրորդ հնդամյակի պլանը կատարելու
համար :

1935 թվականին մենք պետք ենոր
թուիչք պարծենք՝ պետք ետանք 23 միլիարդ
568 միլիոն ռուբլու արտադրանք՝ 19,6
տոկոս աճ՝ համեմատած 1934 թվականի
հետ, աշխատանքի արտադրականությունը
պետք երարձրացնենք 14 տոկոսով :

Պետք երարձրացնենք 24,9 միլիարդ
կիլովատ ժամ ելեկտրոներդիա:

Ածուխ արդյունահանել . . .	104,08 միլ տոնն
(Կակամբող Մի- ության սեջ ըն- դամենը 112 միլ. տոնն)	

Նավթ արդյունահանել . . .	30,330 հազ. տոնն
Թուջ ձուլել . . .	12,5 միլ. տոնն
Գողացած ձուլել . . .	11,8 միլ. տոնն
Գրկատ . . .	8,650 միլ. տոնն
Գղինձ . . .	71 հազ. տոնն
Ալյումինիում . . .	25 > "

Տըակտոր	97	հազ.	տրակտոր 1900 հազ.
Ճիռ ուժի ընդհանուր կարսությամբ, առդ թվում՝ Զելյաբինսկի տրակտորի գործա- րանի 15 հազար թրթուրավոր տրակտոր:			
Ավտոմաբիլ	92	հազ.	հատ
Կոմբայն	20	»	»
Վագոն Հ.Ճ.Ժ. համար յերկունանի հաշվով.	80	»	»
Շոգեքարշեր	1485	հատ	
			այդ թվում 470 հատ հպոր «Փ.Ճ» (Ֆելիքս Զերժինսկի)

Լայն ապրանքներ՝ 1,5 միլիարդ ռուբ.։
1935 թվականին ծանր արդյունաբերու-
թյունը պետք է կատարի 7634 միլիոն ռուբ.
չինարարական աշխատանք, շահագործման
հանձնելով

Դոմնային վառարան	6
Մարտենյան	»
Ելեկտրովառարան	24
Ֆերուճուլվածքների վառարան	6
Պրոլատի դագուան	22
Բիմետալի պրոլատային դագուան	7
Խողովակի դագուան	6
Կոքուի մաքտիոց	9

Աղոթերացիոն ժապավեն	10
Նավթի նախակամն թորման խողո- վակասարք	6
Կրեկինդ	14
Շահուա	41

747 հազար կիլովատ սահմանված կա-
րողություն շրջանային և խոշոր արդյու-
նաբերական ելեկտրոկայաններում

Մենք ընկերներ, համոզված ենք, վոր
մեր կուսակցության լենինյան կենտկոմի
և նրա առաջնորդ ընկեր Ստալինի զեկավա-
րությամբ ծանր արդյունաբերությունը
կկատարի իր վրա դրված խնդիրները։

Կեցցե Լենինի—Ստալինի Բոլենիլիկ-Կառունիսների,
մեծ, անպարտելի կուսակցությանը։

Կեցցե մեր հարթանակները կազմակերպազն ու ներ-
շնչողը, մեր առաջնորդը, մեր բարեկամը, մեր ուսացիչը,
մեր մեծ Ստալինը։ (Բոլորը վոտքի յեն կանգնաւ։ Բուռն
ծափեր, վարժե փոխարկվում են ովացիայի։ Բացական-
չություններ—«ուռա», «կեցցե ծանր արդյունաբերության
հրամանաւար լին։ Ուշոնիկիձեն»։)

ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ

Հնկերներ, թույլ ավեք իմ յեզրափակ-
ման խոսքի մեջ աահմանափակվել հետևյա-
լով : — Յելույթ ունեցող բոլոր պատգամա-
վորները գոհունակությամբ նշելով մեր
ձեռք բերած հաջողությունները ծանր ար-
դյունաբերության շինարարության բնա-
դավառում, միաժամանակ ամենայն յեռան-
դով և ուժգնությամբ ընդգծում եյին, վոր
նլանք պատրաստ են մարտնչելու մեր ծանր
արդյունաբերության հետագա հաղթանակ-
ների համար, 1935 թվի պլանը և յերկրորդ
հնդամյակի պլանը կատարելու համար :

Դրա համար ել յեկեք խոսքից գործի
անցնենք : (Ձայներ՝ «նիշտ ե» : Ծափել) :

Յեկեք Ե՛լ ավելի մեծ ուժով, Ե՛լ ավելի
մեծ յեռանդով համախմբվելով լենինի—
Ստալինի կուսակցության կենտրոնական
կոմիտեյի շուրջը, ծալվալենք պայքար
1935 թվ. պլանը կատարելու համար, յերկ-
րորդ հնդամյակի պլանը կատարելու

համար : Առաջ, դեպի նորանոր հաղթանակ-
ներ : (Բուռն ծափեր : Բոլորը վոտքի յեն
կանգնում, համազումարը յերկարատև
ովացիա յե սարքում ընկ . Որջոնիկիձեյին :
Լալում են բացականչություններ . «Կեց-
ցի ընկեր Ստալինը», «Կեցցե ընկեր Որջոնի-
կիձեն», «Ուռու») :

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՉՈՒՐԴՆԵՐԻ
VII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ
ՏԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՀԱՇՎԵՏՈՒ
ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Լաելով և քննարկելով Ծանր արդյունա-
բերության ժողովրդական կոմիսարը ընկ.
Որջոնիկեցելի գեկուցումը, ԽՍՀ Միության
խորհուրդների VII համագումարը վորո-
շում է. —

1. Ծանր արդյունաբերության ժողովրդա-
կան կոմիսարիատի աշխատանքը բավա-
րար համարել :

2. ԽՍՀ Միության կենարոնական գոր-
ծադիր կոմիտեյի նախագահությանն առա-
ջարկել՝ քննարկել ծանր արդյունաբերու-
թյան ամենից ալիքելի աչքի ընկնող աշխա-
տազներին պարզեատրելու հնարավորու-
թյան հարցը :

ԽՍՀ Միության Խորհուրդների VII հա-
մագումարի նախագահ՝ Մ. կը լինին

ԽՍՀ Միության Խորհուրդների VII համագու-
մարի քարտուղար՝ Ա. Յենուհեկե

Մոսկա, Կրեմլ
3 փետրվարի 1935 թ.

128

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱ-
ՐԻԱՏԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԽՈՐՉՈՒՐԴՆԵՐԻ VII
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Եջ

3

ԽՍՀՄ ելեկտրիֆիկացիան	13
Ածխաբղունաբերությունը	27
Նավթարդյունաբերությունը	40
Մե մետաղուրդիան	57
Գունավոր մետաղուրդիան	72
Քիմիական արդյունաբերությունը	76
Շինանյութերը և շին. արդյունաբերութ.	79
Մեքենաշինությունը	80
Ծանր արդյունաբերությունը ժողովրդական ամ- բողջ տնտեսության վերակառուցման բազան և .	93
Լայն ոպառման առարկաների արտադրությունը .	101
Աշխատանքի հարցերը	104
Ծանր արդյունաբերության կուտակումները .	109
Հասնել և անցնել	113
1935 թվի խնդիրները	120
Եցրաֆական ԽՈՍՔԸ	126

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՉՈՒՐԴՆԵՐԻ VII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՎՈՐՈՇՈՒՄԸ ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐ-
ԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌ-
ԹԻՎ

128

129

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ
ՄԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱ-
ՐԻԱՏԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VII
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

3

ԽՍՀՄ ելեկտրիֆիկացիան	13
Ածխարդյունաբերությունը	27
Նավթարդյունաբերությունը	40
Սև մետաղուրզիան	57
Գունավոր մետաղուրզիան	72
Քիմիական արդյունաբերությունը	76
Շինանյութերը և շին. արդյունաբերութ	79
Մեքենաշենությունը	80
Մանր արդյունաբերությունը ժողովրդական ամ- բողջ տնտեսության վերակառուցման բաղան և .	93
Լայն ոպառման առարկաների արտադրությունը .	101
Աշխատանքի հարցերը	104
Մանր արդյունաբերության կուտակումները .	109
Հասնել և անցնել	113
1935 թի խնդիրները	120
ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ	126

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՎՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐ-
ԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌ-
ԹԻՎ

128

129

ՀՀ Ազգային գրադարան



NL0205757

31. 332

ԳԻՆԸ 60 Կ.

ЦЕНА 50 К.



С. ОРДЖОНИКИДЗЕ

Отчетный доклад Народного комиссариата
тяжелой промышленности VII съезду советов

Партизат, Эривань